



Ղևոնդ Ավիշան

Յուշիկք հայրենեաց Հայոց

Սկիզբն տարւոյ եւ մարդկութեան ի Հայս

Ա

ԱՀԱԻԱՍԻԿ Մարտ ամիս, որուն սպասեցինք չորս ցուրտ եւ երկայն ամիսներ . բոլոր բնութիւն կու հառաչէր կու կանչէր գմարտ . ոչ իբրեւ տարւոյ գեղեցկագոյն ամիսը, այլ պատճառ մերձաւոր գեղեցկութեանց . ոչ իբրեւ զապրիլ դալար, կամ գունաւոր իբրեւ գմայիս, ծաղկագարդ եւ պտղացոյց, այլ այդ ամենայն շնորհաց նշան տուող . եւ ծնող մանկագոյն եւ զուարթագոյն եղանակի տարւոյն, զարնան: Գարունն դեռ եկած տիրած չէ, այլ ահա կու գայ եւ յառաջէ, եւ ձմեռն երթայ եւ հեռանայ: Մեր կրակարանին ժամերն կու կարճընան . առաւօտն կու կանխէ, իրիկունն կ'ուշանայ: Յորեկն աճելով՝ իր թագաւորին (արեգական) ճառագայթներովը կու զարդարի . օդն կու զգայ եւ կու պահէ գտաբութիւնն . կու զգան ջուր եւ հող . ցամաքած, սեւացած, պնդացած երկիրն՝ ձմեռուան ձիւնը եւ եղեամբ կու հալեցընէ եւ կակղանայ . եւ ահա հինգ վեց ամիս իր ծոցը թողեալ թաղեալ սերմանք, թնրեալ թոռմեալ տունկք՝ ծայր արձրկեն, կանչն կ'ընծայուի, կարմիր կու գայ, ծաղիկ կ'երեւի:

Իրաւ դեռ մեր բարձրադիր աշխարհին ամեն տափերն այլ իրենց կերպարանքը չեն փոխեր, եւ այս շնորհքներն չերեւիր վրանին . դեռ ձիւն եւ սառն յամառեալ կու բռնեն զսար ու ձոր, բայց ամենեւին անզգայ այլ չեն . ալետր ժայռերն սկսին սեւ խայծ առնուլ . հողն թէ եւ ոչ դալար՝ գոնէ կու յայտնէ զինքն եւ կու ջանայ թօթուել վրայի ճերմակ թանձրութիւնը: Մեր հիւսիսային խորահովիտներն, եւս առաւել

արեւելեան եւ հարաւոյ եզերքն՝ կ'առնուն բարեխառն կլիմայից հաւասար գարնան գոյն եւ շնորհք . որք արդէն մեր դրացեաց եւ մեր դէպ ի հարաւ գաղթական եղբարց երկիրներուն վրայ համարձակ կու փայլին, եւ գուարթացեալ բնակիչքը ի գործ եւ ի զբօսանս հանեն: Ահա Թադոս տիրոջ երգածայնն այլ Երուսաղեմէն կու գայ .

Հա՛ մըտաք յամիս մարտին .

Ծառերն ամենայն ծաղկին ...

Հոտըն գայր գարնանային

Լոյսն ելնէ Հայոց գատկին: ...

Մենք՝ թէ ծաղիկը եւ թէ լոյսն ամենուն հաւասար մաղթելով՝ լսենք ուրիշ ճարտարագոյն երգչի եւ բազմարուեստ անձի մ'այլ որ Տիգրանակերտի կողմերէն կ'երգէ, նոյնպէս մարտի ծաղկանց հետ խառնելով Ջատկին յիշատակը:

Մարտըն կու գայր ծաղկըներով,

Երկնից հաւերըն կարդալով,

Հրեշտակապետք փառըս տալով .

Յորժամ Հայոց գատիկըն գայր:

Բարկ արեգակըն ծագեցաւ .

Սաստիկ ձրներըն հալեցաւ .

Գառն ու մաքին ընծայեցաւ .

Յորժամ Հայոց գատիկըն գայր:

Ամպ ու երկինքըն խիստ գոռաց,

Ողորմութեան ցօղըն ցօղաց,
Ծով ու գետերըն խիստ ծըփաց .
Յորժամ Հայոց գատիկըն գայր:
Աղբերակունքըն յորդորին
Ծառ ու ճրղերըն գարդարին .
Խոտ անասունքըն կերակրին .
Յորժամ Հայոց գատիկըն գայր:
Մարդապէս է դատեր մեղուն,
Ժողվեր ծաղիկն ի լեռներուն .
Ոչ վախենայ ի մեռելուն,
Յորժամ Հայոց գատիկըն գայր:
Պիլպիլ դումրին` առաւօտուն
Երկիր դարձեր վարդին հոտուն,
Գանկատ կ'առնէր նա ի հողմոյն,
Յորժամ Հայոց գատիկըն գայր:
Կաքաւըն գայր սարէ ի սար
Կարկաչելով ի ձորն ի վայր,
ԶԱստուած օրհնէր ինքն անդադար,
Յորժամ Հայոց գատիկըն գայր:

Հաւ ու ձագերն հաւսարական
Սաղմոս ասեն նոքա լըման,
Աղաղակեն առ տէր միայն
Յորժամ Հայոց գատիկըն գայր:
Դաշտ ու սարերըն նորոգին
Եւ գերդ նոր հարսըն զարդարին,
Ի յԱստուծոյ փառատորին,
Յորժամ Հայոց գատիկըն գայր:
Քար արտասուս բղխէ ըզջուր,
Որպէս ըղծով եղեւ աղբիւր .
Վարդ ու ծաղիկն է համասփիւռ .
Յորժամ Հայոց գատիկըն գայր:
Երուսաղէմ քաղաքն այսօր,
Աշխարհս ի հոն երթան յուսով .
Սուրբ Յարութիւն լըցվի լուսով,
Յորժամ Հայոց գատիկըն գայր:
Հայ ու Հոռոմըն խաչապաշտ
Ամեն բոպիկ ու գլխիբաց
Ուրախանան լուսոյն դիմաց .

Յորժամ Հայոց գատիկըն գայր:

Տէրըն տացէ խաղաղութիւն

Եւ աշխարհի ուրախութիւն .

Հոտըն կու գայ անմահութիւն,

Յորժամ Հայոց գատիկըն գայր:

Իմաստասէրք ուրախանան

Եւ աստընվորքս լիանան,

Ամեն մեղաց ձեռք լրանան,

Յորժամ Հայոց գատիկըն գայր:

Եւրոպիոյ մէջ այլ կան աշխարհք՝ ուր գարնան գալը հանդիսի կատարեն գատիկ օրերը, բնութեան եւ շնորհաց հաճոյագոյն երկու յիշատակները յիրար գուգելով, զգարուն եւ զգատիկ . ինչպէս մեր երգիչն այլ, որ է ըստ ոմանց արքեպիսկոպոսն Ամդայ, Մկրտիչ Նաղաշ, թերեւս մեր ամենէն նշանատր եւ ճարտար անձն ԺԵ դարուն մէջ: Ինքն հայկական Միջագետաց ծնունդ եւ հոգեւոր տէր քազմաթիւ վիճակաց այն կողմերուն՝ Հայաստանի շատ գաւառներէն առաջ կու տեսնէր գարնան բերքը . եւ մեզի հետ կ'ողջունէր այս օրերս, եւ մեզմէ առաջ այլ՝ բաբելական կամ լալական ոտենեաց երկայն խարտեաշ խոպոպները, լելակին տերեւները, լորւոյն (tilleul) կարմիր բողբոջները . հոն արդէն պարկեշտ մանուշակն կապոյտ աշուրները քացեր է իր անխնամ մենարանէն, անուշիկ հոտ մը խառնելով անուշիկ հովի մը . եւ եթէ ասպատակող գնդի մը վերջամնաց զօրաց նման՝ յանկարծ բարբարոս հոմ մը չփչէ, օրէ օր բուսաբերութիւնն կու յառաջէ, եւ գրեթէ դիտող աչք մը չիկրնար հասնիլ անոր շուտ շուտ զարգանալուն:

Արդ անտարակոյս բնութիւնն կու նորոգուի, ծերացեալ տարին կու վերջանայ, կամ նորէն մանկանայ . եղանակաց եւ ժամանակաց սկիզբն դարձեր է: Արժան

Էր որ այս բնութեան նորոգութեան եղանակին՝ սկսէին ժողովուրդք իրենց քաղաքական տարին, եւ գարնան գիշերահաւասարին կարգել իրենց կաղանդը կամ խնդարար նուիրամասկը: Յայսմ մասին շատ խելոք եւ իրաւամբք գործէին հին ժողովուրդք, որոց առջեւ մեք ծաղկեալ նոր ժողովուրդքս՝ անտեղութեամբ անյարմար միջոցէ մը կու սկսիմք մեր տարին, (ձմեռնային արեւադարձէն 10 կամ 20 օր վերջը, 1 յունուարի): Այն հին ազգերէն մինակ քիչ շատ անփոփոխ մնացած Հրեայն՝ մինչեւ ցայսօր իր սրբազան տարին կու սկսի գարնան հետ . միայն թէ տարին արեւու հետ համեմատելու ատեն՝ ամիսներն այլ լուսնի հետ կ'ուզէ յարմարցընել, որով ոչ ճիշդ եւ ոչ միշտ գարնան հետ կու սկսի տարին:

Բարեբաղդաբար, յայսմ իր հետ եւ իրմէ հին ազգ մ'այլ կայ՝ որ նոյնպէս իր հին սրբազան տարեմուտը հաւատարմութեամբ կու նշանակէ իր տօմարին մէջ, եւ մինչեւ ցարդ միշտ արժանապէս կու սկսի այդ տարին՝ երբ արեւն անոր եւ իր սիրական Խոյ աստեղատունը մտնէ, որ է ըսել տոյն որս գարնանամտի, (9 մարտի կամ 21 ըստ նոր տոմ .): Այս ազգս՝ որ յայսմ մասին աւելի քան զՀռոմս եւ զՀելլէնս՝ իմաստասէր մանաւանդ թէ ճշմարտասէր գտնուեր է, եւ այս գիտը պահեր է՝ թերեւս յանգէտս օտարաց, Հայ ազգն է . որոյ համար իրաւամբ պարծելով իր հին հեղինակաց մէկն, անոր աստուածատուր ձրից մէկը սեպելով իր տօմարն այլ, կ'ըսէ համարձակապէս, թէ Աստուծմէ առին «գտումարն, անդ Մովսէս, աստ ՀԱՅԿՆ յառաջ քան զնա»: Հայոց քաղաքական սովորական տարին ալ, ըստ ամենայն հին ազգաց (որոց ռամիկն ոչ երբէք աստղաբաշխ կ'ըլլայ) շարժական եւ փոփոխական էր, նահանջ չընելով . այլ սրբազան տարին՝ հաստատուն է . որոյ սկիզբն ոչ ըստ քաղաքական տարւոյ, Նաւասարդ ամիսն է, լատինաց օգոստոսի 11 23ին հաստատեալ անշարժապէս, այլ բուն արեւու ամիսն, ԱՐԵԳ: Բաց օրացոյցդ եւ նայէ, կու տեսնես որ Արեգ ամիսն Խոյի տանուտէրութեան հետ կու կսկի, որ է կէտն գարնանային գիշերահաւասարի . եւ ուրախութեամբ պարծէ նախնեացդ վրայ, որ այս գեղեցիկ բնական ճշմարտութիւնը անփոփոխ պահելով յաւուրց ջրհեղեղին՝ հասուցեր են մինչեւ ի մեզ, եւ մեզմով օտարաց, առեալ իրենց գերադիցագն նախահօրմէն, ի Հայկէն, որ ոչ միայն ճարտար շարժիչ էր աղեղան, այլ եւ թուոց եւ չափուց: Միանգամայն եւ ցաւէ որ չենք կրնար դեռ ի գործ դնել եւ գուզել այս հին տօմարը նորոյն հետ եւ վարել: Քաղաքական տարւոյ սկզբան հանդիսից, այսինքն Նաւասարդին, փոքր ի շատէ տեղեկութիւն ունիմք . այլ կրօնական տարւոյն եւ Արեգին սկզբան հանդէսներն՝ Հայկազանց խորհրդապահ քրմարանաց հետ ծածկուած են մեզմէ:

Շատ է գիտելին եւ տեսնելին՝ որ իմաստութեամբ գարնան սկզբան հետ Արեգին սկիզբն այլ գուգած է նշանակած է Հայադիրն:

Բ

Նոյն Հայադիրն յափշտակելով գնեց ի հնութիւն ժամանակաց, ներելի կ'ընէ թողուլ այսօր նորագոյն յիշատակները, եւ հնութենէ հնութիւն ելնել ի վեր քան գարեգն եւ զսկիզբն հայկական ամսոց, եւ կու նշանակէ այսօր յիշատակ մ'այլ, որ ոչ մեր հիմկու աշխարհիս դարուց մէջն է, եւ ոչ այլ անկէ առջինին, ալ երկու աշխարհաց միջոցն կրնայ ըստիլ, նախաջրհեղեան եւ յետջրհեղեան աշխարհքները միացընող կամրջոյն վրայ . որ է ծեր նաւողին՝ Նոյի՝ տապանն: Սուրբ գրոց հետ հաշուելով անոր ի տապանը մտնելուն օրը, ըստ սրբագան ամսոց Եբրայեցոց (եւ ոչ ըստ քաղաքականին՝ որպէս ոմանք կ'ընեն) ջրհեղեղին գալը եւ դադրիլը, տապանին նստիլը ի լերինս Արարատայ, պատուհանին բացուիլը, եւ այլն, այս օրուանս կու հանդիպի տապանին ձեղուան բացուիլն, այսինքն վրայի ծածքին: Տապանին ի լերինս Հայոց նստելէն ինչուան լերանց գլուխներուն ջրէն դուրս երեւնալը՝ երկու ամիս անցաւ, յորմէ գուշակուի տապանին մեծութիւնն եւ բարձրութիւնն . յետ 40 ատուրց բացուեցաւ անոր պատուհանն, վասն զի ջուրն անկէ այլ վայր իջեր էր . եւ իբր յետ ամսոյ մը, այս եղանակաց նորոգութեան օրը՝ բացին արգելականքն տապանին վերնածածքը, եւ իբրեւ տան դարպասներու կամ դիտանոցի վրայ ելնելով՝ տեսան «զի նուագեալ էր ջուրն յերեսաց երկրի» . նուագեալ էր այլ ոչ ցամաքեալ բոլորովին . վասն զի ասոր համար դեռ երկու ամիս այլ պէտք եղաւ: Ի՞նչ հիանալի եւ սրտառուչ տեսարան: Այն լերանց կողմ՝ որոց տափի մը վրայ նստեր էր տապանն, կ'արգիլէր համարձակ տեսութիւնը՝ ի պատուհանէն . անոր համար Նոյ կու ստիպուէր թռչուններ արձրկելով անոնց դառնալ գալէն կամ չդառնալէն իմանալ ջրոց ցածութիւնը եւ երկրին ցամբելուն չափը: Իսկ հիմա իր 30 – կանգնեայ նաւատան դիտանոցին վրայ ելած՝ իր համբերող ընտանեօքը, կու տեսնէ այն ամրակերտ ընդարձակ նաւը ծովային բերդի մը պէս ամենաբարձր լեռնատափից միջոց նստած, որոց ետեւէն՝ դէպ յարեւելս, յարեւմուտս եւ ի հիւսիս դառնալով՝ Հայաստանի աւելի կամ պակաս բարձր լեռներն կ'երեւին . ոմանք ամենեւին լերկ ու մերկ նոր ջրէ դուրս ելածի նման . ոմանք քանի մը ամսական արեւու տաքութեամբ սկսած իբր աղուամագով մը ծածկուիլ բարակ

կանաչութեամբ, որոց վրայ ծիրանափայլ ծիծաղի արեգակն ի խոյի
աստեղատունէն . անոնց մէջ այլ կ'երեւին խորածորիք եւ հովիտք, եւ քանի մի
դաշտք՝ իբր աշնան վերջին արօրած պատրաստած սերմնացան եւ անբոյս սեւ
արտեր: Իսկ հարաւային կողմէն կ'երեւին ծովածաւալ դաշտք եւ անապատք
Միջագետաց եւ Ասորեստանի, որ յիրաւի դեռ, թէ ոչ ծովու՝ գոնէ ճահճի պէս կու
ծածանին, եւ տեղ տեղ ցամաքած, տեղ տեղ ջրածածուկ, արեւուն
գարնուածքներէն իբրեւ փշած հայլիներ կու ցոլանան: Երկու ամիս Նոյեանք
տապանին երդիքէն կու դիտեն այս տեսարանը, մանաւանդ թէ միշտ փոփոխեալ
տեսարան մը, ջրոյն օր ըստ օրէ քաշուելովն, եւ արեւուն օր ըստ օրէ տաքանալով
եւ այն դաշտաց վրայ տեղ տեղ երեւցած տխրալի դէմքերը, աւերեալ աշխարհի
եւ խղոյած հասակաց եւ գեղեցկութեանց մնացորդները բոլորովին քայքայելով,
ծածկելով, եւ թողլով միայն (տխրագո՛յն մնացորդ) չոր ու ճերմակ ոսկորներ, այն
հեշտամոլ փափուկներուն, եւ այն յանդուգն հսկաներուն՝ որք կարծեցին թէ միայն
երկրիս վրայ է մարդուս վիճակն . եւ անիծեալք յերկնից՝ երկրէս այլ դուրս ի ծոց
անդնդացեալ ծովուն ծածկեցան, կերակուր կիտից եւ վիշապաց . հազիւ թողլով
սակաւ ինչ նշխարքնին ծովէն փոխած՝ իրենց հին բնակարանաց քով . որոց
հիմունքն անգամ տակնուվրայ եղած հողուն հետ խառնուած կորած են: Եւ երկիր
երկրորդ անգամ կ'երեւի «աներեւոյթ եւ անպատրաստ» անապատ մը ամայի,
անմարդաձայն, անկենդանի . յորոյ վրայ հազիւ իբրեւ պզտի շարժուն գծեր կամ
բծեր՝ տապանին պատուհանէն արձրկուած թռչուններն թափառելով կ'անցնին՝
դադար կամ բոյն մը փնտռելու: ...

Գ

Ո՛րչափ տարբեր էր այս երեւոյթս երկրի՝ այն առաջին սկզբնական
անպատրաստ վիճակէն ելած եւ նորակերտ զարդարածէն . երբ ձայնն եւ մատն
արարչապետին՝ հինգ աստուածային օրուան մէջ՝ գործելով եւ ներգործելով,
փոխեց գտարերս երկրի եւ բոյսս եւ ի կենդանիս, պատրաստելով ի վայելս
գերագոյն արարածոյ մը՝ գոր անոնցմէ ետեւ պիտի ստեղծեր . եւ որոց այսօր իսկ
յիշատակ է ըստ Հայադիր կարգի՝ զարնանամտի եւ բացման տապանին հետ .
այսինքն Արարչագործութեան, որոյ սկիզբն յ'17 ամսոյս նշանակի եւ վերջն ի 22,
ստեղծմամբ մարդոյն: ...

Ստեղծումն մարդոյս . ի՛նչ մեծ եւ արժանատի յիշատակ . ոչ այնքան հնութեամբ, որքան հիացմամբ մտաց եւ քննութեամբ: Ո՞վ կրնայ անտարբեր կենալ երբ իրեն ծագմանը, եւ առաջին ծագման խնդիր մը ընկնայ ի միտքը:

Շատ հեղ լեռնադաշտակի մը վրայ վայրի կաղնին տեսնալով ինչուան հարիւր ոտք բարձրութեամբ, որուն տերեւագարդ թւերուն բոլորտիքն 5 600 եւ ասելի ոտք կու շրջապատեն, եւ չքին տակ հովի մը բոլոր իր հոտին կ'ապաստանի, եւ որոյ կոթընած բունն` պապուն պապուն այլ յենարան եւ հովանի եղած է . հիանալով այդ հին ու նոր հսկայ հասակին վրայ, որ ինչուան եօթ ութ հարիւր նոր գարնան ծիծաղեր եւ նոր ձմերանց դիմացեր է, գարնացմամբ հարցեր ենք, Ուսկի՞ց եւ ի՞նչպէս առաջ եկած է . եւ ասելի գարնացմամբ լսեր ենք` թէ պզտի խոզակէ մը, բթաչափ կաղինէ մը առաջ եկած է այդ ահեղ հսկահասակ բուսական նահապետն: Հապա այդ կաղի՞նն . այն այլ ասոր նման եւ ասկէ առաջ հսկայ ծառէ մը . այն հին կորած վերցուած ծառն այլ ուրիշ խոզակէ մը . եւ այսպէս մէկմէկէ: Վերջապէս, մանաւանդ թէ սկզբնապէս, ամենէն առաջ ո՞րն էր, կաղնի՞ն թէ կաղինն, ծա՞ռն թէ կուտն . կամ որ նոյն է` ըստ բիրբայ փիլիսոփայից, հա՞ն թէ հաւկիթն: Իրենց խնդիրքն եւ քննութիւնք դեռ այս մեծ հարցման պատասխանը չեն կրցած տալ . եւ դեռ հաւերը թոցնելով` հաւկիթները գլորցընելով առաջ կ'երթան: Մենք հաւանեալ եւ հաւատացեալ ենք մովսիսական աստուածաշունչ գրոց պատմութեան, որ ամենէն առաջ մեզի ցուցնէ գտիեգերս` իբրեւ ամենածրար ձու մը ստեղծուած յանժամանակէն Աստուծոյ . որոյ Հոգին` իբրեւ հովաթեւ համասփիտ հաւ մը` գրգայր ի վերայ անդնդապտոյտ տարուբերած տարերացն, իր կամքով եւ հրամանաւ կոչելով եւ կոկելով ի գանազան ձեւ ու բնութիւն . որով միանգամայն կերպացաւ կաղնին առանց կաղինի եւ հաւն առանց հաւկրթի:

Մեր սկիզբն այլ այս կանոնով եղաւ, բայց ազնուագոյն կերպով, մեր ազնիւ բնութեան համեմատ: Ո՞վ ի հաւատացելոց` իր կրօնական եւ պատմական ուսմանց սկիզբը չէ լսած չէ սովորած . բաց անգամ մ'այլ հրաշալի նախամարգարէին գրոց գլուխը, եւ կարդա քու սկզբանդ սկզբնաւորութիւնը, մարդոյն ստեղծագործութիւնը .

Եթէ ուզես, մտացոլ վրայ հեծած՝ թռի՛ր մինչեւ քու հայրենիքդ, եղամական սահմանները . եւ դեռ դրախտին մէջ չիմտած՝ անկէ դուրս եւ քիչ մի հեռու (բայց մի՛ մինչեւ ի Դամասկոս), ընտրէ՛ դարատափ կամ ձորավայր մը . դիցուք թէ ըլլայ մեր հին Սրմանց, (թերեւս եւ Սերմանց) լեռներուն մէջ, որ հիմա Պինկէտօ կ'ըստին . եւ անկէ վերանալով պատմական ժամանակաց սկիզբը, տե՛ս նկատե հոն իջած՝ յառաջ քան ի Սինա, եւ յառաջ քան ի Քորեբ՝ մէկ մեծ թեթեւ ու շարժուն բրգան պէս բան մը, իբրեւ ամպով, ծխով, լուսով, բիւրեղով շաղուած, որոյ միջէն կարծես տեսնել մարդկային կերպարանաց ուրուական մը, որ ծիրանի գօտոյ նման ընդարձակ գիրկ ու թեւեր շարժելով, եւ իր ստորոտը եղած կաւային հողի կոշտ մը քրքրելով՝ յիրաւի քեզի մեզի նման նիւթական կերպարանք մը վեր կու կանգնէ: Առջի ստեղծուածներէն տարբեր եւ ազնուագոյն կենդանոյ մը կաղապար կ'երեւի ատիկայ . հագիւ երկու թաթով գետինը կոխած, ուղղաձիգ կու վերանայ երկնադիտակ բոլորակ գլխով . երկու կողմէն թեւեր արձրկած, ոչ թռչելու յարմար, այլ իբրեւ փարելու իրեն նմանոյ մը հետ, կամ թէ նոյն իսկ իրեն ստեղծողին՝ երբ ճանչնայ գայն: Տեսածնիս դեռ անկատար կաղապար մ'է . անշարժ, անյարդ, անգարդ պատկեր մը, բայց Աստուծոյ պատկեր ըլլալ գուշակուի . կաւակերտ կարմրակերտ արձան մը, որ կարծես թէ ներսէն կենդանանալու աշխատելով՝ մանր քրտան կայլակներ կու թորէ բոլոր գանգուածէն դուրս, գոր երեկոյեան գովագին հողմիկն կամաց կամաց ցամքեցընելով կու ճերմկեցընէ, կ'ամփոփէ . եւ իբրեւ հեռուէն մօտեցընելով աչքիդ՝ հետզհետէ յայտնագոյն կու ցուցընէ մարդկային կերպարանք . նախ եզրիպտական արձան մը կարծես գայն, վերջը կովկասեան կերտուած մը, յետոյ մոմէ մարդ մը . հիմա բուն մարդ ըսել չըսել չես գիտեր, վասն զի բան մ'է, բայց ոչ կենդանի եւ ոչ մեռեալ, ոչ ի քուն եւ ոչ արթուն . այլ այսպիսի՝ որ ոչ անուն ունի եւ ոչ ճիշդ պատկեր մը՝ մեր հիմակուան գաղափարաց մէջ: Իսկ հրաշագործ ճարտարապետն՝ իբր թէ պահ մը կիսկատար թողլով իր ամենէն զարմանալի շէնքը՝ կու դիտէ անոր չափակցութիւնը, եւ ծանրութեամբ ու մտածմամբ կ'ուզէ այդ կաւեղէն պատկերին ազդել ողորկութիւն, գոյն, շարժումն, շունչ, կեանք, զգացումն, բան եւ հոգի . եւ այս ամեն ըսածներս՝ իր դիտելուն եւ հաճելուն ատեն՝ կ'ազդին, կ'երեւին իր ձեռակերտին վրայ: ... Տես, ի՞նչ շուտ շուտ այդոր արտաքին երեւոյթն կակղած կոկած սկսաւ փայլիլ, հետզհետէ մոմագոյն, մոխրագոյն, շուշանագոյն, ծիրանագոյն, վերջապէս մարմնագոյն . եւ այնքան բարակ ու փափուկ, որպէս թէ թափանցիկ մաշկ մը միայն ծածկէր ներքին զարմանալի

մեքենայն, եւ իբրեւ ապակոյ մը տակէ ցուցնէր կապուտաթել ջղեր եւ երակներ: ... Ահա յանկարծ բոլորակ գլխէն ինչուան ուտերը ընծուեցան արձրկեցան գունդ գունդ խոպ խոպ փունջեր, բայց իբրեւ պղնձի անդրիի մը վրայ` անշարժ են . աղօտ աղօտ արշալուսէ մը ծագած առաւօտու պէս յանկարծ կ'երեւին բարակ թարթափք եւ յունից կամարք, որոց ներքերը երկու մարգարտափայլ գոգք կան, մէջտեղուանքն սեւ ադամանդ . անշուշտ ճանչցար աչքերը . բայց անոնք զքեզ չեն ճանչեր, քեզի չեն նայիր, չեն շարժիր . սատնամած լճակներ են, ծածկուած ակունք են, որ կ'ուզեն լոյս առնուլ եւ լոյս տալ: ... Եղիցի՛ ուրեմն լոյսն, անհամբերութեամբ կանչես . եղիցի՛ լոյս ի վերայ այդ սքանչելի դաստակերտիդ . եղիցի՛ դա կենդանի պատկեր Աստուծոյ: ... Եւ ահա եղեւ լոյսն կենդանի: Կու տեսնե՞ս, անդրին մարդ կ'ըլլայ . կ'ըլլայ ըսելու չմնար, կաւէ կաղապարն` Ադամ եղաւ: Ի՞նչպէս եղաւ, ուսկի՞ց եկաւ այն ճառագայթն, այն գոյներն, այն շարժումն... Դեռ վայրկեան մը, բոպիկ մը, պիկ մ'առաջ պատկեր էր, հիմա անձն է: Վասն զի հրաշագործն` աստուածային երագութեամբը դպաւ այդոր ճակտին, եւ մէկէն արձանին մեքենաներն սկսան շարժիլ: Դիտէ՛ դա գանգուր գիսակներն` ի՞նչպէս բարդ բարդ կու ծփան . նայէ դա չիկորակ շրթանց շարժումնքը, դա գմբուխտէ աչաց հրեղէն թաւալմունքը, երկխորշեայ ռնգանց բարակ շնչառութիւնը, դա գեղեցիկ գլխոյն հեզիկ պտոյտքը, դա ջաշուռ թեւոց թափ տալը . դա դոռոյթ տուող ոտից դոփիւնը, որ ոչ միայն անդրին ի պատուանդանէն կտրեցին, այլ բոլոր անձին ներքին ազդուածքէն ուժ առած` այնպէս սաստկութեամբ մը գետնին թունդ կու տան, որ օդապարիկ գունտէն աւելի շոյտ եւ բարձր պիտի ցատքէր յերկնից միջոց, թէ որ դեռ ճակտին վրայ գրուած չըլլար մատն աստուածային, որ իբրեւ ամեհի երիվար մը` սանձով, կամ ծխով հողմով զինուած պատրաստ նաւ մը` խարսխով, դեռ բռներ է գայն . բայց այնպէս մը կ'երեւի` թէ հագիւ եւ ոչ ընդ երկար կրնայ համբերել բռնուածն:

Իսկ աստուածապետականն յետին հաճութեան ժպիտ մ'այլ տալով, իր անքննելի ծոցէն կու փչէ նորաշէն պատկերին վրայ շունչ մ'այլ . շունչ բանական, աննիւթ եւ անապական, որով բոլորովին կ'ըլլայ կու կատարուի մարդն . եւ հաղորդ աստուածային զօրութեան, աստուածային երագութեամբ մը ճանչնալով ինք զինքը, ի՞նչպէս եւ ուստի՛ ըլլալն, միանգամայն աչքով եւ շրթամբք, թեւօք եւ ծնգօք, սրտի եւ բանի եւ հոգով կու կանչէ` ԱՍՏՈՒԱ՛Ծ ԻՄ:

«ՅԱԿՈՒՆՍ Եփրատայ, ի ծաղկագարդ վայելչութիւնսն», ըստ սրբագան երգչին, ի ծնակս Ծաղկոտան եւ ի բարձրավանդակն Բագրեւանդայ, հրաւիրեն գմեգ այսօր հայադիր յիշատակք: Ի՞նչ գեղեցիկ հովիտ, մանաւանդ թէ ի՞նչ ընդարձակ դաշտ՝ լցեալ գարդուք բուսաբերութեան . գոր կու սնուցանեն հարիւրաւոր ականակիտ վտակք, իջնելով ի կողից այրարատեան լեռնաշարից եւ Աղթամարայ պարատափին . որք ամեն կողմանէ շրջապատեալ ձեւացրնեն այս ձուածեւ եւ տաշտանման հովիտս, իբրեւ 90 մղոն երկայն արեւելքէ յարեւմուտք, եւ 30 մղոն լայն ի հիւսիսոյ ընդ հարաւ . եւ ժողովելով ի գոգավայրն եւ խառնելով ընդ գլխաւոր վտակին՝ կու գետանան կ'ըլլան պայծառն Արածանի, որ է արեւելեան օժանդակ եւ գուգակից եղեմաբուղիսն Եփրատայ, որ ի Բարձր Հայոց ի գագաթէն Կարնոյ կ'իջնէ, եւ երկուքն այլ ի համանուն Ծաղկի լեռներէն: Եթէ այս մեծ տաշտաձեւիս հարաւային շրթունքն, այսինքն Ապահունեաց (Մէլագկերտ) եւ Ծաղկոտան (Խամուր, Տիատին) լերինքն՝ ճեղքուելով անցք մը չտային Արածանոյ, անշուշտ գեղեցիկ եւ քան զԱղթամար ընդարձակ ծովալիճ մը կ'ըլլար Բագրեւանդ . եւ թերեւ երբեմն այնպէս այլ եղած ըլլալը ստուգեն մեզի երկրաբանք: ... Բայց դու, Հայկակ, դու հոս գուցէ աւելի ծաղկահան կ'ուզես ըլլալ քան երկրաբան . այս հովիտներուս մէջ մտած ատենդ՝ Շահապիվանը կու փնտռես . մեր հին նախնեաց հետ կու փափագիս նաւասարդի աշխարհախումբ հանդէսները կատարել . բայց դեռ իրեք չորս ամիս կայ այն տօներուն . ուրիշ անգամ այլ կու գամք ի Բագրեւանդ, որ ոչ սակաւ յիշատակներ ունի: ... Բայց քանի մը ամսէ ետեւ ամառուան տաքուն՝ հիմկու ծաղկանց դալարութիւնը չենք գտներ . թէ եւ այն ատենն այլ ունի իր լեռնաբուսիկ գոյնգոյն ծաղկներն:

Հիմայ գարնան ծաղկունքն ծածանին փնջիկ փնջիկ, թռչունք ձայնեն մանրամնչիկք, ջրերն կրկրջան գովիկ գովիկ . ո՛ր էր թէ ազգային գուսնակ մ'այլ երգէր մեզի գգարուն: Չեն պակսեր գարուն երգող Հայ գուսանք, ձեռնաւորք եւ մշակք, սրբամօրուս պաշտօնեայք, պատրիարքք եւ կաթողիկոսք անգամ . այսքան զգալի եւ շօշափելի բնութեան եւ վայրաց գեղեցկութիւնն՝ գրեթէ հարկաւ երգիչ եւ բանաստեղծ ըրած է գանոնք, գոնէ գարուն գովելու համար . բայց Կոստանդին Երզնկացին, իսկաշնորհ, իսկատիպ գուսան 550 տարուան, յանձն չառնուր ասանկ դրսէն դրդեալ քերդող ըլլալն, այլ տեսիլք տեսնելով, լոյս

տեսնելով առեր է այդ շնորհքը .

«Այնպէ՛ս որ, կ'ըսէ, ես ի յիմ խօսից շարելըն գարնացայ»:

Եւ այսպէս կ'երգէ զգարուն .

Մեծ գոհութիւն, հարիւր հազար,

Մեզ աւետիք է նոր հասել .

Եւ մեզ շընորհք յերկնաւորէն

Յերկնից յերկիրս ի մեզ հոսել:

Երկիր է լի մութն եւ մըլար,

Սառն էր կապել եւ պաղ ու քար .

Հանց որ չըկար բոյս մի դալար .

Հիմի՝ ինք նոր է զարդարել:

Ձըմեղըն բանդ էր եւ խաւար .

Գարուն եհաս ու նոր բահար,

Ի էտ ի մէնջ գիշերն աւար .

Ձի արեգակն է մեզ ծագել:

Երկիրս է մայր աննըմանի,

Ձինչ գեղեցիկ իրք՝ ծընանի,

Շատ բարութիւնք յինք սընանի .

Հանց որ փոին գեղեցկացել:

Երբոր հնչեց հողմն հարա՝
Ջինչ տրտմութիւն՝ յերկրէ տարաւ .
Հանց որ չըկայ տեղ մի ծարաւ .
Ամենն են բարութեամբ լըցել:
Հեզ որոտաց ամբ ցողաբեր .
Կամար կապի յերկինս ի վեր,
Հոսէ յերկիր ահեղ գետեր .
Հաւսար գերկիր են արբուցել:
Է հարսանիք տիեզերաց,
Է ցրնծութիւն պտղաբերաց .
Գոյնըզգոյնով ցեղք ի ցեղաց
Ծաղկունք գերկիր են զարդարել:
Ծովըն դրբուրդ առնու սիրով,
Խաղան գեռունք յերկիր ու ի ծով .
Ակունքդ յորդոր զան պաղ ու հով՝
Եւ ի քարէն յառաջ բղխել:
Ահեղ գոչեն գետերս յովով
Յորդ ի լերունքս ի վայր գալով,
Գան ման ի ման ծաւալելով .

Միրով ի ծովն երես դրել:
Խաղան եղունք եւ այծենունք,
Իջնուն ի դաշտ ւ յաղբիւրակունք,
Երեվայրիք եւ անասունք
Ի կապանաց են արձակել:
Հաւերըդ գան քաղցրի ձայնով
Ծիծեռն ի հետ սաղմոսելով .
Գայ արտուտիկըն կարդալով,
Ջառաօտուն է բարբառել:
Աճումն առնուն եւ ծընանին
Հաւք ու գագանք ւ երեվայրին:
Ձագօր հաւերտ ելնեն պարին,
Ի են միաբան երամ կապել:
Ծաղկունքըն գան եւ ժողովին
Ի բուրաստան ւ ի բաղչանին .
Մէկ մի մըտել ի մէջ ծովին,
Տեսն է դեղին ւ յերեր կացել:
Բլբուլն եհաս շաքարբերան,
Աւետաբեր մեծ յարութեան .

Վարդին եհար կանանչ վրբան

Որ գայ բագմի գերդ հուր վառել: ...

Երբ բլբուլի եւ վարդի խօսք բացուի՝ երգն շատ կ'երկրննայ . ապրի՛ Կոստանդին՝ մեր երգիչն . բայց հիմա հանգչի քնարն, հանգչին ծաղկունքն այլ . վասն զի յանկարծահաս հովու մը պէս օրուանս յիշատակն կ'անցնի հովտէս, եւ կ'այլագունէ զգարուն: Դաշտիս երկու ծայրերէն կու լսուի խոր դորդիւն մը, ոտնաձայն մը, ահեղ շշնկոց մը . լերանց գլխէն փոշէխառն ամպեր կ'ելնեն, անոնց մէջէն ճերմակ փայլակներ . արեւմուտքէն եկածն դիմացի արեւուն ճառագայթներովը վառվրձած արծաթէ հեղեղ մը կու նմանի, որ Բարձր Հայոց դարերէն փութափոյթ թնդալով կու թափի հոս . արեւելեան կողմէն եկածն աղիւսագործաց հնոցէն ելած սեւ ծովսերու պէս կու ծառանայ ու կու ցածնայ ... Ասոնք յիրար չմօտեցած՝ մենք մօտենանք պատմութեան ճամբով . անցնինք հազարով տարիներ, այսօրուան ամսակէտին հետ զուգենք տարեկէտն այլ, Քրիստոսի 775 թուականն:

Այս նշանակեալ տարիս՝ վերջին տարի է կենաց եւ իշխանութեան երկու մեծ ինքնակալաց, որք մէջերնին բաժնած են արեւելքի բաղդը կամ դժբաղդութիւնը: Մէկն է Կոստանդին կայսրն, անուանի իր պատկերամարտութեամբ եւ մոլութեամբ, որոց յարմար ստացած զարշելի անունը՝ պահէ մինչեւ ցայսօր, Կորբո Նիմոս . (... . .): Պուլկարաց եւ պատկերաց հետ կոռուլէն՝ ատեն չունէր արեւելք հոգալու եւ պաշտպանելու հպատակները, որոց մէջ սեպուէին եւ մասն մի Հայոց: Իսկ մէկայլն է Էպուսճաֆար Ապտ Ալլահ Էլ Մանսուր, զոր պատմիչք մեր Չափր անուանեն, խալիֆայ Արաբացոց, որ ամիրապետութեան հին աթոռը փոխադրեց ի նորոգեալն Բաղտաստ (763), եւ Կորբոնիմոսի թուլութիւնը տեսնելով՝ իր բռնութիւնը տարածեց ինչուան ի Կիլիկիա, որով Մեծ եւ Փոքր – Հայք այլ ընկան իր ընչաքաղցութեան եւ անգթութեանց տակ . որոց համար շատ մեղադրուած է բնիկ եւ օտար պատմիչներէ . վասն զի համառօտ ըսելով, իր 21 տարուան ու 4 ամսուան իշխանութեան ատեն վեց հարիւր հազար մարդ ջարդել սպաննել տուաւ, կ'ըսեն . որոց մէջ անշուշտ քանի մը բիւր այլ ազգակից պէտք է ողբալ: Այդպիսի ամիրապետ մը ունող ամիրայք՝ անկէ գթասիրտ չէին կրնար ըլլալ: Իր իշխանութեան ատեն Հայաստանի ոստիկանաց

մէջ (վասն զի այսպէս կ'անուանէին յԱրաբացոց եկեալ կուսակալքն) ամենէն գլխաւորն է Աբդլլա, եղբայր համանուն նախորդ ամիրապետին, որ ընդհանուր Պարսից եւ Հայոց կողմանց մեծ կողմնակալ էր . եւ ուրիշ կամահաճոյ հրամաններէն զատ՝ այս այլ դրաւ իր հպատակացը, որ մօրուքնին ածիլեն, եւ գլուխնին կանգուն ու կէս բարձր խոյր մը դնեն . այս եւ ասոր նման պատուէրքներով կու գային ի Հայս ոստիկանք եւ հարկահանք . (ինչպէս Սուլէման, Չալեհ, Ռուհ, Մուսէ, Մուհամմէտ, Եզիտ, Պէքիր՝ Բաքար ըստ մեր պատմչաց) . որք այնչափ կեղեքեցին աշխարհնիս, մինչեւ շատերն փախչելով գետնի տակ եւ քարայրներու մէջ պահուրտէին: Ժամանակին հոգետր տէրն՝ Տրդատ կաթողիկոս, եւ Հայոց ազգային հոգաբարձուն Սահակ բագրատունի՝ շատ անգամ բողոքեցին Աբդլլայի . իսկ նատստիկանները կու փոխէր, բռնութիւնը կու թողոր: Այսպէս յետ վերոյիշեալ Եզիտաց եւ Պէքիրաց՝ խաւրեց (770) զՀասան Իպն Քահդապա (որդի Կահադրայ՝ ըստ մերոցս), որ հետը բերաւ խորասան – պարսիկ անկարգ գունդ մը, որոց ըրած չարութիւններէն քանի մը յիշելով ժամանակակից եւ ականատես պատմիչն (Ղեւոնդ), զգուելով կ'ըսէ . «պատմել ոչ կարենք զաղէտից պատմութիւն» . մեք այլ այնպէս ընենք, որ արցունքով չիթօշնին ապրիլի ծաղկըներն: ... Բայց ի՞նչ ընէ խեղճ ժողովուրդն, որ ունեցածը բռնահան հարկահանաց տալէն ետեւ՝ չունեցածն այլ տալու համար կու ծեծուի, կու կախուի, սատուցեալ լճից մէջ կու ձգուի . ի՞նչ ընէ հին հայութեան մնացած զինուորութիւնն, որ իր եղբարց դառն հեծութիւնը կու լսէ . ի՞նչ ընեն Խրամի եւ Նախշուանի եկեղեցեաց մէջ այրած նախարարներէն մնացեալ ճիռ իշխաններն՝ որ իրենց սեփական պայագատութիւնը այսպէս տակն ու վրայ կու տեսնեն . ի՞նչ ընեն մանաւանդ մեծասիրտ Մամիկոնեանքն՝ Արտաւազդ եւ Մուշեղ, որդիք Հմայեկայ եւ Հրահատայ . միթէ վիրաւորեալ առիծուց նման միայն մոնչե՞ն իրենց աչաց առջեւ անապատացեալ հայրենեաց վրայ: Չէ, այսպէս չըրին . այլ յուսահատութեան մոռնչ մը զայրագին սրտի, իրենց սրտակցաց ու պատուակցաց ձայն տուին . որք, ըստ ասելոյ պատմըչին, «եղին զոգի ի ձեռն իրեանց, եւ ձեռնամուխ եղեն յիրս՝ զոր ոչ կարէին վճարել, վասն զի նուագունք էին . այլ սակայն լաւ համարեալ զմահ քաջութեամբ՝ քան զկեանս վտանգաւոր, ձեռնամուխ եղեն»: Նախ եռանդունն Արտաւազդ, անվախ, բայց եւ ոչ առանց խորամանկութեան իրեն հին նախնոյն՝ Գայլ Վահանայ, յանդգնօրէն գնաց ի մայրաքաղաքն Հայոց՝ ի Դուին, ուր արաբացի ոստիկանին փոխանորդ զօրավար մը նստէր, եւ գրեթէ անոր աչաց առջեւ իր սակաւաթիւ գունդը

ժողովելով՝ սկսաւ զինքը զրահել պատերազմական պատրաստութեամբ, համբաւելով՝ թէ թշնամեաց դէմ պիտի երթայ: Արաբացի զօրավարք՝ իրենցմէ հաւատարիմ կարծելով գնա, միանգամայն եւ չուզելով իրենք զիրենք վտանգել, թերեւս օգնեցին այլ զինքը զինելու . եւ իբրեւ յառաջամարտիկ գունդ բանակի՝ թողուցին իրենցմէ զատուելու: Արտաւագդ մէկ մոր խաբուած բանակին բազմութենէն դուրս ելաւ, մէկէն վազեց դէպ ի հիւսիս՝ Շիրակ գաւառ, անկէ Վրաց ամուր եւ ազատ կողմերը երթալու . այն ատեն այս գաւառս դեռ իր Անի բերդը իշխանանիստ չէր ըրած, այլ կ'երեւի թէ հիմակուան Ռուսաց իշխանանիստ եւ ամուր բերդաքաղաքն Կիւմրի՝ էր գլխաւոր աւան մը, ուր անիրաւ հարկահան մը նստէր: Արտաւագդ անոր շատ անիրաւութենէն թերեւս ոչ շատ պակաս անիրաւութեամբ մը վրէժ պահանջեց . սպաննեց . եւ ժողոված ստակները յափշտակելով գնաց Վրաց կողմը, միաբանեալ իշխանագանց հետ մէկտեղ: Արաբացոց աչքերն բացուեցան . մէկէն նախնի ոստիկաններէն մէկը զօրապետ դնելով եւ իրենց ծառայութեան մէջ եղող Հայոց սպարապետ Սմբատն այլ մէկ տեղ ասած՝ Արտաւագդայ ետեւէն ընկան, ինչուան Ախրլցխայի կողմերը յարձրկելով . բայց հագիւ քանի մը կտոր բան կրցան աւարել, եւ յետ դարձան . վասն զի Արտաւագդեանք ինչուան Եզերացոց երկիրը (Աճարա) գացին, եւ այն տեղոյն ու մօտի Վրաց գաւառաց տիրեցին: Իսկ Իպն – Քահդապա ոստիկանն՝ ուրիշ բան չկրցաւ ընել, բայց եթէ առջի անգութ հնարքը բանեցրնել . այսինքն՝ դարձեալ ամեն դի հարկահաններ դրկել . որք պժգալի պիժակներու պէս ելան ժողովրդեան մնացեալ վաստակը ուղեւծուծը քամելու . բայց այս անգամ շատ չյաջողեցան: Վասն զի եթէ Արտաւագդայ հեռու էր, մօտ էր Մուշեղ . որ նախ իր երկիրներուն մէջ մտածները հալածեց, եւ բռնութիւն ընողներն այլ բռնաբար սրով դատեց . եւ պահ մը իր ընտանիքը Երասխաձորոյ մօտ Արտագերից ամուր բերդը ապահովցրնելով, ելաւ անկէ 60 կտրիճ առած հետը, մտաւ այս մեր եղած Բագրեւանդայ գաւառը, ուր Էպու Մճուր՝ փոխանակ հեզաբար ծաղիկ քաղելու բռնաբար հարկ կու պահանջէր . գնա այլ անոր մարդիկներն այլ կոտորելով՝ փոթորկի պէս յառաջ անցաւ . իսկ ծխահալած պիժակներն՝ ահով դողով սկսան ծակերու մէջ քաշուիլ . որով համարձակութիւն առին նեղեալ եւ լլկեալ փախստականք Հայոց՝ գալու եւ Մուշեղայ պզտիկ գնդին քառնուելու . որուն համբաւն եւ սարսափը չորս դի տարածեցաւ . բայց զօրաց քիչոտութիւնն այլ իմանալով՝ ոմանք ի թշնամեաց սիրտ ըրին մէկէն վրան հասնելու եւ թերեւս մէկ հարուածով վերցրնելու իրենց արգելք եւ սատակիչ եղողը: Բայց այնպէս

գազանացեալ Մամիկոնն մը բռնել՝ շատ դժար եւ վտանգաւոր փորձ էր: Այսպէս փորձեցին նախ 200 արաբացի պատերազմողք, որք Կարնոյ քաղքէն (Էրզիրում) ելան, աղէկ զինուած եւ զրահուած, իշան ի Բասեն, գալու ի Բագրեւանդ . գիշերը վրայ հասնելով՝ մտան Խարս գիւղը, (թերեւս Մժնկերտոյ մօտ), եւ անոր այգեստանեայց մէջ փռուեցան . այգեաց պատերը իրենց պատնէշ կարծելով: Իմացաւ Մուշեղ, եւ հետը քանի մը կտրիճ առած՝ գիշերանց հասաւ հոն . եւ որովհետեւ այդ պատերը հիւսած չէին՝ այլ միայն քար քարի վրայ դիզած՝ ցանկի մը պէս, անոնց տակ նստող եւ պատկողներուն վրայ փլուց . հոն կապուած ձիանն այլ խրտելով սկսան իրենց տէրերը կոխկըտել, գիշերուան, ձիերուն, պատին փլչելուն շփոթութեան հետ մէկտեղ՝ ներս թափեցան Մուշեղեանք: Եղածն յայտնի է . թերեւս ոմանք յայլագգեաց կրցան՝ մերկ կողոպուտ փախչիլ ազատիլ, բայց շատերն այն քարերուն տակ քնացան, մնացին:

Հազիւ քիչ մ'ատեն կրցաւ Մուշեղ հանգիստ առնուլ իր ամրոցը, վասն զի այլագգեաց աղաղակն կու գոռար . Դրնայ կողմնակալ զօրավարն իր պահապան զօրաց մէջէն չորս հազար կտրիճ ձիաւոր ընտրեց եւ յանձնեց Էպու Նեճիպ զօրապետին, որ երթայ ջարդէ ջնջէ ապստամբները: Նեճիպ իր գունդը անոնց երագրնթաց տաճիկ ձիերուն պէս թոցընելով հասարակաց դուրան ճամբէն, յԱյրարատայ ի Կոզովիտ, անկէ ի Բագրեւանդ հանեց, եւ եկաւ անոր գլխաւոր շինաւանին մօտ, որ է Բագաւան (Իւշ գիլիսէ): Այս ւանին մօտ, այս Արածանոյ նախընծայ վտակաց եզերք, այս մօտիկ Նպատ լեւան շքին տակ էր, որ անկէ 400 տարի առաջ ուրիշ Մուշեղ մը, Քաջակորովն Մուշեղ, Շապիոյ արքայից արքային ահեղ բանակը ցրուեց . բայց այն ատեն Հայ Արշակունի թագաւորի մը ամբողջ զօրաց սպարապետ էր, եւ յունական գունդ մ'այլ մարտակից ունէր, եւ Մեծ Ներսէս մը բազկատարած աղօթաւոր: Անկէ 200 տարի վերջ՝ ուրիշ Մուշեղի մը վրայ գալով՝ անցաւ Բագրեւանդէն Խոսրով Անուշըրէւան, եւ կոտորեցաւ ի Մուշեղայ Եփրատ գետոյն վրայ: Իսկ այսօր ասոնց թոռանց թոռն հրահատեանն Մուշեղ՝ 4000 արաբացի սպառազէն ձիաւորաց դէմ ունէր 200 Հայ . քսանի դէմ մէկ միայն . սակայն ունեցածն բաւական եղաւ իրեն: Ասոնք յարձրկեցան եկողներուն վրայ, շփոթեցին, ցրուեցին, շատերը գետին փռեցին, ատելի շատերը փախուցին . փախստականաց ետեւէն ընկան, օրով ճամբայ հալածեցին դէպ ի հիւսիս, ինչուան Արագած լեւան ոտքը . շատերն այլ ճամբուն վրայ փռելով, եւ անոնց հետ զօրավարնին ալ . եւ ասարներով ու ձիոց

երամակով յաղթական դարձան: Այլագգեաց մնացորդքն հասան ի Դուին . բոլոր քաղաքը ի դող, ի սուգ, անէծք եւ նգովք շարժեցին . եւ այնպէս ահ ընկաւ մէջերնին՝ որ կարծէին թէ ամեն դռնէ Մուշեղը ներս կու մտնէ . եւ գրեթէ չվստահանալով քաղաքին ամրութեանը՝ ներքին ամրոցը քաշուած սմբեցան:

Այս անակնկալ եւ գրեթէ անհաւատալի յաղթութիւնն եւ յաջողութիւնն, եւ այն ահարկու Արաբացոց ահաբեկ ըլլալն՝ կրնայ գուշակուիլ՝ թէ երկայն ատենէ ի վեր ընկճած ժողովրդեան մը ի՛նչ ազդեցին . ի՛նչպէս համբաւն հռչակուեցաւ . ի՛նչպէս գլուխներ տաքցան՝ խելապատակէն այլ ի վեր, մինչեւ խոհեմութեան եւ նախագոհութեան ձայները շլսեցին . եւ զիրար գրգռելով պատշաճէն վեր բաներ մտածեցին . մանաւանդ չափազանց բորբոքեալ ճգնաւոր մը, աւելի սրտին հարցնելով քան Աստուծոյ, զամենքը կու յորդորէր եւ քաջալերէր, եւ իբրեւ տեսիլք տեսած հաւանեցնէր, թէ արդարեւ ազգին բաղոն հասած է . մի տարակուսիք կ'ըսէր, ձեր մէջէն մէկն բաւական է հազարի դէմ կենալու, երկուքն՝ բիրուց դէմ:

Յիրաւի շատ դժար էր ռամկաց՝ (յետ տեսնելու որ 200 կտրիճ 4000 սպառազէն հեծեալները վանեց) այս դիպուածին մէջ՝ սրբութիւնը եւ ստութիւնը իրարմէ որոշել: Բայց ոչ միայն ռամիկ մարդիկ եւ առանձին իշխանք միաբանեցան, այլ ինչուան Սմբատ բագրատունի սպարապետն այլ՝ հաւանեցաւ թողլու գԱրաբացիս եւ միաբանելու ընդ համագգեացն: Այս բանս յաղթութեան մը չափ արժեց միաբանելոց . բայց մեծագոյն յաղթութեան մ'այլ կու փափագէին . այսինքն հաւանեցրնելու գԱշոտ, նախայիշեալ Սահակայ իշխանապետին որդին . որ չափաւոր տարօք, եւ տարիքէն աւելի փորձ հռչակեալ խելացի մարդ էր . որչափ այլ հայրենեաց փառքը փափաքէր, այլ աւելի անոր ապահովութիւնը կու պահանջէր . կ'իմանար կ'իմացընէր այն ճգնաւորին չափազանց նախանձաւորութիւնը, եւ կ'ըսէր իրեն եղող իշխանաց եւ յորդորչաց . «Ո՛վ հայրենասէրք, զգոյշ կեցէք . քաջ էք եւ եռանդուն, բայց աւելի լաւ է իմաստութեամբ գործել եւ ձեզմէ առջիններուն փորձը քննել . կամք եւ կարողութիւն միշտ չեն կրնար իրարու հաւասարիլ . մէկն ի ձեր ձեռքն է, մէկայլն ոչ . շուտ եւ անակնկալ յաջողութիւնք՝ երբեմն մեծագոյն անյաջողութեանց պատճառ կ'ըլլան: Քանի մը հարկահան եւ զօրավար զարկիք, քիչով շատերու դէմ կեցաք, եւ երթալով կու յուսաք շատնալ . սակայն ինչուան ո՞րչափ կրնանք

բազմանալ, ինչուան ե՞րբ միագունդ մնալ: Դեռ Արաբացուց մեծ գորավարն ի Դուին է . դեռ ի Կարին ուրիշ մեծ գորավար մ՛այլ կայ, դեռ շատ բերդեր անոնց ձեռքն են: Եթէ բերդերն այլ առնուք, եթէ Հայաստանի մէջ եղած գորքն այլ հալածէք, դեռ դժուարութիւն քիչ մը կ'ուշացընէք, վտանգը կը մօտեցընէք: Ի՞նչ պիտի ըլլայ ձեր բովանդակ գունդն Էմիր Էլ – Մումնեայ տէրութեան ծովածաւալ եւ ահատր գորութեան դէմ: Ո՞ր ազգ, ո՞ր տէրութիւն կրցաւ կամ կրնայ անոր դէմ կենալ . Յունաց տիեզերական ինքնակալութիւնն այսչափ անգամ կռուելով՝ չկրցաւ իր կորուսած երկիրներն ի ձեռք ձգել, ահա կայսերն Կոստանդին՝ որ մինակ առիծներու դէմ ելլելով՝ սպաննեց, տեսէք ի՞նչպէս սարսափած՝ թող կու տայ որ ամիրապետն կոխէ իր սահմանները: Ինքն ծովն ու ցամաքը բաւական ամուր չի գտներ այնպիսի թշնամոյ մը դէմ, դուք ի՞նչ բանի վրայ գրած էք ձեր ապահովութիւնը: Արդ եթէ կ'ուզէք ճշմարտապէս հայրենեաց օգուտը, ինչպէս եւ ես ամենայն սրտիւ, հանդարտօրէն մտածելով կեցէք տեղերնիդ . եւ ջանացէք իմաստութեամբ դարման տանիլ եղած եւ կրած չարեաց: Ապա թէ ոչ, ինծի կ'երեւի, թէ կամ յետ վնասակար փորձոյ՝ պիտի յանձն առնուք կորակոր նուաճիլ մնալ տեղերնիդ . կամ յուսահատած՝ միայն գձեց ապրեցընել ջանալով՝ ինքնական թողուլ հայրենիք, տուն, տեղ եւ վաստակ, ձեր հարց քրտինքով ժառանգած բարիքը, ձերնախնեաց հաւատքով կանգնած եկեղեցիները, եւ ձեր ծնողաց գերեզմաններն այլ՝ ատելեաց ոտից կոխան, եւ երթալ ի ծառայութիւն կայսեր Յունաց, եւ պանդրխտութեամբ կեանքերնիդ մաշեցընել: Եւ կամ, որ շատ վախնալի է, շուտ կամ ուշ՝ ձեր թշնամեաց ձեռքը ընկնալով՝ չարաչար մահուամբ պիտի ջրնջուիք»:

Այս եւ այսպիսի բանք բաւական չեղան այն տաքցած գլուխները զովացընելու, թողին զԱշոտ, եւ եկան իրարու հետ դաշինք դնել, խորհուրդ ընել, հնարք մտածել, այլ ինչպէս շատ անգամ պատահած է եւ կու պատահի այսպիսի դիպուածոց մէջ, չկրցան միաբանիլ մէկ գործոյ վրայ, ոմանք իրենց երկիրը քաշուեցան, ոմանք ամուր բերդերու ապաւինեցան: Ամենէն տաք գլուխներն որ Մուշեղայ հետ միաբաններ էին՝ զինուոր եւ ռամիկ, 5000 հոգի գունդ մը եղան: Դուինը թողուցին, գնացին Կարնոյ քաղաքին վրայ, գոր բանի մը տարի առաջ Եգիտ ոստիկանն առեր էր ի Յունաց եւ լաւ ամրացուցեր . թերեւս հիմա մէջը բաւական գորք չկար, չէ Հայոց թուոյն՝ այլ ոգւոյն դէմ կենալու, բայց պարիսպներն բաւական գորաւար էին . բոլոր այն տարի (774) ձմեռուան

սաստիկ սառնամանիքներէն այլ չձանձրանալով՝ Հայք պաշարեցին կեցանքադրին քով . եւ մեծամեծ մեքենաներ կանգնելով՝ կու ծեծէին պատերը . եւ քանի մը ծակ բանալով՝ կրցան քիչ մը քար թափել ի ներս եւ քանի մը մարդ սպաննել . բայց աւելի սովով կու նեղէին քաղաքը, որ եւ անձնատու ըլլալու վրայ էր, երբ յանկարծ մեծ մրրիկ եւ գորատոր հարկ մը հասաւ Հայոց վրայ: Ասոնց հեռանալը յԱյրարատայ, եւ ոմանց այլ իրենց բերդերը քաշուիլը տեսնելով Գըրնեցի արաբացիք, սիրտ առին, չորս կողմէն այլ ժողովեցան, եւ սկսան այրած սրտով ու ծարուած սրով մօտակայ գաւառաց մէջ պտըտիլ, եւ շատ արիւնահեղութիւն ընել . բայց ապստամբները նուաճելու համար ստիպուեցան ամօթով՝ եղածը իմացընել ամիրապետին: Սա վրէժխնդրութեան յարմար առիթ գտնելով, անթիւ գօրաց միջէն ընտրեց Խորասանիկ կտրիճները, 30,000 հոգի, ձիով եւ գրահով աղէկ մը պատրաստած, եւ յանձնեց Էմր Իպն Իսմայիլ փորձ եւ հռչակատր գօրավարի մը ձեռք: Որ եւ հարաւային հովերէն առաջ անցաւ Ասորեստան, եւ Աղձնեաց կողմերէն գալով մտաւ ի Խլաթ մեծ քաղաքն . ժողովելով հաւատարիմ մարդիկ՝ աղէկ մը քննեց տեղեկացաւ Հայոց պատրաստութիւնը, որչափ հոգի միաբան եւ ուր ըլլալնին, եւ ինչ ոյժ ունենալնին . գոր ի հարկէ շատ քիչ եւ իբրեւ ոչինչ գտաւ իր բանակին բազմութեան եւ կազմութեան համեմատելով: Հոն ի Խլաթ էր այն ատեն խոհական իշխանն Աշոտ, եւ տեսնելով իր հայրենեաց վրայ եկած չարիքն, եւ իր խրատած իշխանաց անհաւանութիւնը, սիրտն կ'այրէր կու հալէր, առանց կրակը դուրս տալու . մանաւանդ որ պիտի ստիպուէր Արաբացոց գործակից ըլլալու իրեն ազգայիններուն դէմ: Անհնարին տագնապին մէջ առանց ատեն կորսընցնելու ամենայն ծածկութեամբ իմացուց իշխանակցացը՝ Էմրի պատրաստութիւնը, եւ ահա ժամանակն է, կ'ըսէր, ցուցընելու ձեր խոստացած հաստատութիւնը, կամ իրարու պաշտպանութեամբ մեռնելու: Առջի խրատուն մտիկ չըրին դաշնակիցք, ետինքէս կասկածեցան . կարծեցին որ Աշոտ Արաբացոց հաւատարիմ մնալովն՝ զիրենք խաբել կ'ուզէ եւ հեռացընել ի Խլաթայ . եւ մտքերնին դրին Կարնոյ պաշարողաց նման՝ այս մեծ քաղաքս այլ առնուլ յայլազգեաց: Համազասպ Արծրունեաց իշխանն գլուխ կեցաւ, հետն առաւ Վասպուրականի գօրքերէն գատ՝ Ամատունեաց գունդն այլ, Սմբատ սպարապետին Աշոտ եղբօր գունդն այլ, եւ ելաւ երթալ Վանայ ծովուն հիւսիսային արեւելեան կողմը՝ Արճէշ բերդաւանին վրայ, ուզելով հիմնայատակ ընել . անցած տեղերէն ռամիկ հետեւակ մարդիկ այլ կու ժողովէր կու խառնէր

գորքերուն: Երբ հասան ի Բերկրի, Խլաթէն Հայ մը եկաւ նորէն իմացընելու թէ Էմր գորավարն մօտ է երեք բիր եւ աւելի գորքով: Համագասպ հպատացեալ՝ գայս այլ նենգութիւն կարծեց, եւ փոխանակ պարգեւելու՝ պատժեց լրաբերը, եւ առաջ անցաւ հասնելու յԱրճէշ: Ասոր բնակիչքն այլ իմաց տուեր էին Էմրայ, որ բազմութեամբ գորաց ծածուկ ճամբաներով եկեր ապահով տեղ մը դարաներ էր . եւ հագիւ թէ Հայք սկսան Արճէշի բերդը ծեծել, Արաբացիք դարանէն ելլելով վրանին ընկան, եւ անգլէն անհմուտ հետեւակ գնդին մեծ մասը ջարդեցին, որոց ոմանք այլ փախչելու ատեն ծովը թափեցան . եւ այսպէս անխոհեմութեան գոհ եղան 1500 անպարտ մարդիկ . անոնց հետ իրենց առաջնորդ շորս ազնուական իշխանք այլ . մնացեալքն փախստեամբ ցրուեցան: Այս պատահարս եղաւ ապրիլի 16ին (775): Արաբացիք գանոնք երկար միջոց հալածելէն ետեւ՝ դարձան անկէ մէկայլ ապստամբները փնտռելու . եւ Խլաթու եւ Մանագկերտի գաւառներէն վեր փութալով թափեցան հոս, ի Բագրեւանդ:

Ահա այս էր այն հնողանման սեւ ծովսն գոր տեսանք յարեւելից . որ եւ կոխելով այս ծաղկագարդ վայելչութիւնները, գետոյս աղբերականց քով՝ Արծնի ըստած գիւղը իջան . եւ դադրեցան գէնքերնին սրելու եւ մահու գործիքները պատրաստելու: Իսկ արեւմուտքէն փրթած փոքր արծաթափայլ հեղեղն՝ էր Մուշեղեան գունդն Հայոց, որ պաշարէր զքաղաքն Կարնոյ . եւ յանկարծ լսեց Արճիշու կոտորածը: Յետ այնչափ երկայն համբերութեան, պզտի գնդով մը այնպիսի մեծ քաղաք մը պաշարելու եւ վտանգելու, որսը բռնելու ատեն՝ ստիպուիլ թողուլ, ո՞րքան ծանր, ո՞րքան սրտակտուր էր: Այլ ուրիշ հնար չկար . ակռանին կրճտելով դարձուցին երեսնին ի Կարնոյ . բայց ո՞ր երթան: Երկու ճամբայ կար դիմացնին . մէկն եւ ապահովագոյնն էր՝ Արտաւագոյայ բռնածն, անցնիլ երթալ յարեւմուտք եւ ի հիւսիս, Յունաց կողմը մտնել, եւ յետ այնքան նեղութեանց՝ գոնէ ապրիլ եւ հանգչիլ: Իսկ մէկայն՝ կորին կորուսած առիծուն ճամբան էր . գորաւոր թշնամեացը վրայ դառնալ եւ յուսահատ կատաղութեամբ գարնուիլ, ըլլայ ինչ որ ըլլայ: Եւ այս ետինքը ընտրեցին այն գայրասիրտ ընկերակորոյս առիծքն, Կարնոյ լերանց դարերէն թափուիլ ի Բասեն, եւ անկէ այլ Սուկաւ լերանց (Քէօսէ տաղ) կռնակէն ընկնիլ ի Բագրեւանդ, քիչ օրուան քիչ ժամուան գործ մը եղաւ իրենց . հոն այլ չդադարելով, ոչ թշնամոյն բազմութիւնը ուզեցին քննել, ոչ անոր շարժելուն սպասել, ալ դարուողոր գետնի մը վրայ արձրկած հրագունտի պէս ցատքըտելով առաջ եկան, եւ փոխանակ թշնամեաց

սպասելու՝ իրենք անցան գետը: Թշնամեաց ահեղ բազմութիւնն եւ ատելի
ահարկու պատրաստութիւնն, արաբիկ երիվարաց վագն ու փոխնչն, լուսնանիշ
վրանաց եւ դրօշուց շարժիւնն, խառնալուր աղաղակն գոչումն, եւ
պատերազմական գործեաց եւ թմբկաց որոտումն, փոխանակ գիրենք
վախցընելու, այնքան ատելի կատղեցուցին բորբոքեցին, որ Արաբացոց բանակէն
քանի մը հարիւր քայլ հեռի՝ թողուցին ոչ միայն իրենց բեռները, այլ եւ ձիանքը .
հետեւակուց ատելի ազատ, եւ համարձակ կրնային հայկական աղեղները քարշել
հեռուէն, ու մօտանց թուր ու նիզակ շարժել: Երկայն ճամբուն յօգնութիւնն այլ
չէին ուեր մտիկ ընել, եթէ գիշերուան սեաւ վարագոյրն երկու բանակաց մէջ
չկախուէր: Անոր մէկ կողմը 30,000 սպառազէն Արաբացիք, մէկայլ կողմն 5000
հետեւակ թեթեւազէն Հայք անցուցին, ի՞նչ հոգուով ի՞նչ մտածութեամբ ապրիլի 24
ին 25 մտնող միջոցը, կրնար գուշակուիլ քան թէ գրուիլ: Առաւօտն հազիւ թէ
ծագեց՝ Հայք անհամբերութեամբ նետուեցան բազմութեան մէջ, սաստիկ
կոտորած մը ըրին, սրընթաց հեծեալներուն մէկ մասը հալածեցին հեռացուցին,
բայց վերջապէս իրենք այլ յօգնեցան: Արաբացիք սրտմտեալ եւ դայնահար յետ
դարձան, Հայոց նախարարներէն մէկ քանին՝ (որ ռամկին պէս հետեւակ չէին)
քշեցին իրենց ճորտերովը: Հայոց ռամկին այլ, յետ քաշուեցան, այն ատեն
Արաբացի հեծելոց եկաւ վրէժխնդրութեան կարգն . սկսան կոխկըռտել դէմ դնող
հետեւակ Հայերը: Ասոնք իբրեւ երկայնաչար ալիք՝ ատելի մեծ եւ երկայն ալիքէ
մը ծածկուելու թաղուելու ատեն, վերջին անհնարին ճիգ մ'այլ ըրին, յետին
յուսահատութեան կամ յուսոյ ձայն մը վերուցին, իրար գիրար կանչելով եւ սիրտ
տալով . «քանի որ թելերնուս վրայ դեռ քիչ մը ուժ կայ, կ'ըսէին, պէտք է թափենք
մեր հայրենեաց եւ եկեղեցեաց վրայ . ողջ ողջ երես դարձընել եւ յետ դառնալ՝
անկարելի ըլլայ մեզի . մեռնինք զէնք ի ձեռին, քան փախստեամբ ապրինք»: Եւ
արիւնոտ աշուրնին մէկ մը երկինք տանելով, մէկ մը Բագրեւանդայ պաշտպան
Ս . Յովհաննիսի, կանչելով ու գոռալով՝ նորէն յարձրկեցան, եւ անգամ մ'այլ՝
իրենցմէ մեծ եւ ուժով ալեաց վրայ ելան, միայն հազար հոգի մնացեր էին
միագունդ՝ երկու երեք բիրուց դէմ, գոր վերջին անգամ մ'այլ քշեցին: Իսկ ասոնք
այնպէս զարհուրեալ շփոթեալ էին, որ չէին գիտեր թէ մարդու՞ հետ, հրէշից հետ,
թէ հրեշտակաց հետ կու պատերազմին . եւ իրաւ թէ սուտ՝ իրենց շփոթութիւնը
ծածկելու համար, յետոյ կու պատմէին, թէ մենք Հայոց գնդին հետ կու տեսնէինք
երկնաւոր գօրքեր, պապասներ եւ երէցներ, որք ատետարանօք եւ բուրվաւոր
կ'առաջնորդէին անոնց: Անշուշտ այսպէս տեսան ինչուան որ Հայոց վրայ զէնք

շարժելու ոյժ տեսան ինչուան որ Հայոց վրայ գէնք շարժելու ոյժ չմնաց: Այն ատեն թիւն յաղթեց, եւ եղբոր դիմակաց չգտաւ` արաբացի գունդն յաղթական եղաւ: Տարիէ ի վեր անդադար կոտող եւ վագող` 3000 Հայք իրենց նիզակաց վրայ երես ի գեհին Արաժանոյ ծաղկանց մէջ փռուելով` արիւնով ներկեցին ապրիլի երանգ երանգ փողոցը: Հոն երկու բարձր ծառոց պէս ընկան պարագլուխք նահատակացն` ինչուան ետքը իրենց խոստմանն եւ քաջութեան հաւատարիմ մնալով, Մուշեղն մամիկոնեան եւ սպարապետն Սմբատ . անոնց հետ նաեւ շատ մեծատոհմիկ նախարարներ, ինչպէս բագրատունին Սահակ, գնունին Վահան Դաշնակ, եւ Սամուէլ մեծ նախարարն Մամիկոնէից, որ տարօք դեռ երիտասարդ եւ գեղեցկութեամբ անուանի, ծաղկանց, մէջ ծաղիկ, եւ իր ընկերակցացն հետ յիրաւի գարնան ամեն գարդերէն աւելի սրտառուչ կու փայլէր, իր վերքերէն բղխած վարդերուն մէջ:

Եթէ այն ճգնաւորին քիչ մը արտորնօք տեսած եւ շփոթած տեսլեանն համեմատ` փառաւոր վախճան մը շունեցաւ պատերազմն, սակայն եւ ոչ բոլորովին անօգուտ մնաց: Թէ եւ գործն քիչ շատ ստգտանելի ըլլաւ անաշտ դատաստանի առջեւ, շիկրնար անտես ըլլուիլ այնքան քաջութիւն, հայրենասիրութիւն, կրօնասիրութիւն այլ: Բայց ազգանախանձ միաբանութիւննին աւելի գովելի կ'ըլլար` եթէ ըստ խրատուն Աշոտոյ շարժէին պատերազմէն առաջ, կամ պատերազմի ատեն . եւ կամ թէ յետ պատերազմին` Արծրունին Մեհրութան չսպաննէր քաջին Մուշեղայ երկու որդիքը (որք իրեն ապաւիններ էին), իբր թէ հայրենին եղաւ պատճառ այնքան մարդկան եւ իր հարազատաց կոտորածին: Իսկ Արաբացիք որ այն գունդը կոտրեցին, եւ Բագրեւանդայ դաշտաց վրայ անթաղ թողուցին, ու սկսան չորս դի աւրել եւ աւարել, իրենց կորուստներն այլ չէին կրնար ծածկել, եւ ոչ իշխել շատ հեղ այնպիսի փորձեր փորձելու: Էմը` իբրեւ յաղթական` ամիրապետին երթալու ատեն` չարաչար ցաւելով բռնուած մեռաւ ի Պարսկաստան . քանի մը ամսէն ինքն ամիրապետն այլ նոյնպէս վերցուեցաւ . յաջորդ տարին` պատերազմին մէջ ընկնող Սմբատ սպարապետին որդին Աշոտ, սկսաւ նորէն Արաբացոց ետեւէն ընկնիլ, եւ երկիրները ազատելով` Անի բերդը ամրցուց, որ յետոյ իր ցեղին թագաւորութեան աթոռ եղաւ . եւ օր մը աղօթք ընելու ատեն` թշնամիներէն պաշարուած, աղօթքը չթողուց, այլ լմանցընելէն ետեւ` ելաւ զարկաւ գանոնք, եւ գլխաւորին` Լիպատոն Աբդուլայն` երկու կտոր ըրաւ: Ասկէ ետեւ եկող ոստիկանք սկսան զգուշութեամբ վարուիլ Հայոց հետ, մանաւանդ

Հարուն Էլ Բէշիտ, որ ամիրապետ ըլլալէն վեց տարի առաջ (780) Հայոց եւ Պարսից մեծ ոստիկան դրուած էր:

Այս է Բագրեւանդայ ըսուած կոհին . գոր կարմիր արձանագրութեամբ նշանակէ Հայադիրն յ'18 ասեկանի (25 ապրիլի) 775 թուին Քրիստոսի:

Թ . Ս . Թեոդորոս Սահլունի

ԱՀԱԻԱՍԻԿ հասաւ մեղրակաթն Մայիս, գեղեցկագոյնն յերկոտասան հարագատս տարոյ, գոնէ մեր հայրենեաց եւ անոր նման աշխարհի մէջ . ուր այս ամիսս՝ հայադիր հայկադիր՝ Մարերի անուամբ հեզիկ նագիկ կու պարէ ի բլուրս եւ ի բարձունս, բոլորովին կանաչ ու դալարագգեստ . ձեռքն ու ծոցն, գլուխն ու գօտին՝ փունջ փունջ գոյն գոյն ծաղիկներով լցուած, որք իր թեթեւ գարշապարաց կոխած տեղէն կարծես դուրս բղխեն . արծաթալիք աղբերակունք կանչեն կրկջան . ծաղկափետուր թռչնիկք երգեն պարեն . թեթեւաթիկ ուրք եւ այծեմունք սահին սուրան . հոտաւոր հովիկք եւ գով գեփիտիկք ծոպ ծոպ ծամենին ծածանեն, երբ հովտէ հովիտ ցածնալով բլրէ բլուր ցատքելով՝ անցնի վագէ բամբիշն բարձանց Հայոց՝ մրագարդն մարերի: Անոր շողակաթ շոգոյի շնչէն՝ ծաղկըներն վառ վառ շողշողան, պտղունք խայծ խայծ խանձին կարմրին . եւ եթէ ձայնն անուշիկ հասնէ՛ր ակընջիդ ... Ո՛հ, երգն հայկաժնին մարերեայ՝ Հայոց հովասուն բարձանց վրայ, հագար տարիներ առաջ, երբ իր ազգն տէր ու ժառանգ էր բոլոր իր աստուածապարգեւ երկրին, այն ատենուան մրագարդ մարերեայ երգն այլ՝ իրեն նման աննման էր . մեր նոր ըսած երգերն՝ ինչպէս չոր տերեւ մը վարդի դիմաց՝ չէին կրնար կենալ . ոչ մեր գուսանք եւ ոչ օտար երգիչք կրնան անոր արձագանգներն արթնցընել բարձր Հայոց պաղանձաւաց մէջ . եւ թէ ճաշակիկ մը, ձայնիկ մ'ուզենք երագել, թերեւս միայն Բեթելայ բլուրներէն լսուած վայելէ մեղրաբերանն մարերեայ . որ թուի՝ թէ դեռ Եփրատայ երիտասարդ վտակներով ծաղկած ծածուկ ծմակէ մը կ'երգէ . «Ահա ձմեռն անց . անձրեւք անցին եւ գնացեալ մեկնեցան . ծաղիկք երեւեցան յերկրի մերում . ժամանակ եհաս հատանելոյ . ձայն տատրակի լսելի եղեւ յերկրի մերում . թզենի արձակեաց զբողբոջ իւր . որթք մեր ծաղկեալք ետուն զհոտս իւրեանց»: ... Անշուշտ եռանդուն սիրտ մը հոս չդադրելով՝ գմայլած, հոգեշունչ երգչին հետ ուզէ հրաւիրել անձանօթ մերձաւոր մը, սրբազան գեղեցիկ մը, աղաւնակերպ

հեզադէմ մը ... «Ընդ հովանեաւ վիմին»: Այո՛, Հայադիրն այսօր կու տեսնէ, կու յայտնէ այդպիսի մը, անծանօթացեալ անուամբ եւ տեղեալ, որ ահա հանգչի ընդ հովանեաւ ծառոյն եւ ի վերայ վիմին . յետին եւ քաղցրագոյն հանգիստ, նախ քան զհանգիստն յաիտենից: ...

Ահաւասիկ նա . նման սրբագան սքանչելի եղբօրորդոյն, արդարեւ սպիտակ ու կարմիր է . երիտասարդ մը կուռ եւ կատարեալ հասակաւ . բնութիւնն առիծու եւ կերպարանքն աղաւնոյ . գիտէ մոնչել, բայց ընտրէ մնչել . իբրեւ մեծ աշխատանքէ եւ յերկար վշտերէ եկած՝ անմարդաձայն ձորակի մը մէջ՝ փռուած է մենասօր ծառի մը տակ, որ կարծես իր գետնասամած ճիւղերովն իբրեւ մայրենի թեօք կ'ուզէ պաշտպանել զանիկայ, որ աջ թելը ձորեզերէն ցցուած քարի մը վրայ դրած է ծառին ներքեւ, եւ յոգնած գլուխն այլ թեւին վրայ, ձախը կուրծքին վրայ պարկեշտ պատմութեանն խորշերուն մէջ: Կարծես ճաղկապածոյճն մարերի ի հովիտ եւ ի բլուր թափառելով՝ կու փնտռէր այս երիտասարդը, որ ըստ երախտապարտ պատմըչի մը թողած յիշատակին, «Էր աչօքն թուխ, եւ զանգրահէր, եւ երեսօքն խարտեաշ, եւ անձամբն երկայն» . (աչքերն սեւ, մազերն գոռու ու դալար, երեսն դեղին ու կարմիր, հասակն ու կազմուածքն երկայնաձեւ) . զգեստն պարզ մաքուր երկայն պատմութեան մը, վզէն ինչուան ծնկուրները եւ այլ վար . մէջքը գօտուով զսպած . սրունքն պարթեական սոնապաններով ծածկած . դեղին դաստակներն կիսաբաց . ուսին քով մէկդի ձգած հայկական եղջերածէ խոյրն: Դրսուանց ամենեւին անհոգութեան կերպ, ներսուանց անհնարին հոգ մը, որ երբեմն երբեմն բացխփիկ ըրած երկու սեւ ադամանդ պատուհաններէն կու յայտնուի . պահ պահ յանկարծ սեւ ամպի շուքի պէս բան մը բոլոր երեսէն սահելով՝ անանկ խեղճ ու ցաւագին երեւոյթ մը կու տայ, որ կարծես թէ քովի ձորակին վազած վտակին պէս՝ իրեն համար բոլոր աշխարհ կ'անցնի, եւ կրնայ ըսել ինքն այլ իբրեւ զԱյրն ցաւոց, թէ «Տրտում է անձն իմ մինչ ցմահ» . այլ շուտով ամպի տակէ ելած բարկ արեւու ճառագայթի պէս լոյս մը կու ծագէ դէմքին վրայ, սքանչելի հանդարտութիւն մը բոլոր անձը կու պատէ . կու խփէ երկայնաշար թարթափքը, եւ այնպէս անուշակ ու թեթեւ քունի մէջ կ'երեւայ, որ դարձեալ կարծես լսել իր մեղմիկ շունչէն, թէ «Ես ննչեմ եւ սիրտ իմ արթուն կայ»: Ո՛վ քուն ցանկալի քան զարթնութիւն . ո՛վ հրաշալի հանդարտութիւն . ո՛վ հանգիստ անբժութեան, ո՛վ տխրութիւն անտրտում . զեփիւռ, ծործոր, բոլոր զարնան գեղեցկութիւնն կու թուի իրեն հետ լռել ու մրափել: Ո՛հ, Հայկակ, թէ

գիտելիք այս միայնութեան պատճառը, այս քնոյն պետքը, թէ գիտելիք անոր յաջորդելու յետին արթնութիւնն, անշուշտ փափագելիք որ գոնէ Եփեսոսեան մանկանց չափ երկրննար այդոր քունն, կամ թէ նոյն իսկ կենաց յետին քունն այլ հասնէր շուտով խառնուէր անոր . անզգալի կերպով շունչը առնուր վեր քաշէր, եւ դիմացնիս թողուր անարիւն նահատակի շուշանագոյն մարմին մը, թաւալած ի մէջ մանուշակաց եւ աղբրանց արեանց:...

Բ

Բայց ո՞ր եմք մեք . ո՞ր է այս անծանօթ ձորակն, անծանօթ երկիրն, եւ ո՞վ այս աննման երիտասարդս: Մի թէ կամա՞ւ մոռցան պատմիչք եւ զլացան աշխարհագիրք, (եւ մանաւանդ մեր բազմերախտ պատմահայրն եւ աշխարհագիրն Մովսէս Խորենացի, որ բոլոր Մեծ Հայոց 200ի չափ գաւառները մէկիկ մէկիկ համրեց) նշանակել մեզի Կոտերոյ երկիրը, Սալահունեաց գաւառը, Սուրենաշէն աւանը, Պարթենից դղեակը, եւ այն սրտառուչ Սէղէմնուտ ձորակը՝ ուր այսօր կու հրաւիրէ զմեզ Հայադիրն, Եփրատայ բարձր հոսանաց եզերքը, որ Կարինէն իջնելով ի Դերջան գաւառ, անտի կ'երթայ յԵկեղեաց (Երզրնկա) . եւ այս երկու յետին գաւառաց միջոց դար – վար երկիրն է մեր փնտռածն, որ կերպով մը որչափ անծանօթ է՝ այնչափ այլ ծանօթանալու անուններ ունի . կ'ըստի նաեւ Կորդուաց երկիր, Հայոց ուրիշ հեռու աշխարհի եւ գաւառներու անուանակից . թերեւս անոնց նման կորդ, խորտուբորտ երկիր մ'ըլլալուն համար, կամ բնակիչքն նոյն տեղէն եկած ըլլալուն համար . կ'ըստի եւ Կոտերոյ երկիր՝ յանուն Կոթեր աւանի . կ'ըստի յատկապէս եւ առաւել հայապէս Սալահունեաց (կամ Սալահունեաց, Սահլունեաց) գաւառ, որոյ մէջ էին վերոյիշեալ շէնք եւ տեղիք, եւ քանի մ'ուրիշ այլ, զոր յիշէ հայադիրն եւ լռէ հիմկու աշխարհագրութիւնն: Այս տեղերուս հնագոյն եւ մէկ հատիկ եւ մեզի հարկաւոր յիշատակն՝ ասկէ 1500 եւ աւելի տարի առաջ կ'ելլէ . այն տարիները՝ որ քաղաքական մթութիւն մ'այլ կու պատէր բոլոր մեր աշխարհը . երբ սասանեան Արտաշիւր պարսիկ՝ Արշակունեաց թագաւորները հալածեց ի Պարթեւաց եւ ի Հայոց եւ բռնաբար տիրեց մեր երկրին . ուսկից հեռացեալ պատանին Տրդատ՝ Հռովմայեցոց քով կու մեծնար, եւ կու պատրաստուէր քաջութեամբ տիրելու հայրենեացը . իսկ նախարարք Հայոց՝ ոմանք հնագանդէին բռնաւորին, ոմանք այլ իրենց երկիրներուն ամբութեանց վստահացեալ՝ կու սպասէին իրենց

օրինաւոր տիրոջ: Ասոնցմէ մէկն էր Սալահունեաց գաւառին տէրն այլ՝ Սուրէն, որոյ ցեղաբանութիւնն մնացած չէ, այլ այսչափ յիշուած՝ որ թագաւորական ցեղէ էր կամ խնամի, ինչպէս անունէն ալ կրնայ գուշակուիլ . իր անուամբ աւան մը շինէր էր, Սուրենաշէն, յետոյ Չուրէն կոչուած, մօտ ի հին բերդաշէնն կամ դղեակն Պարթենից, որ յետոյ Բերդոտն ըսուեցաւ, եւ անուանէն կ'երեւի որ շինած էր լեռան մը կող, որոյ վրայ կայր բերդն, եւ շինողքն էին Պարթեանք կամ թերես Պարթեք: Այս երկիրս գրեթէ Մեծ Հայոց արեւմտեան սահմանաձայրն է եւ մօտ Փոքրն Հայոց ու Յունաց բաժնին . ըսել է՝ Հռովմայեցոց իշխանութեան, որք այն ատեն ինչուան այս կողմերը նուաճած էին: Յունաց սահմանակցութեամբ կ'երեւի թէ Սուրէն յունական ախորժակներ այլ ունէր, իր անուան համեմատ սուր բարքը կակղցրնելու համար . եւ կ'երեւի թէ տիկինն այլ յունագգի էր, Աղուիթա անուամբ որ է Սիրելի, (Աղաւիթի ըստ յունաց), եթէ հայկական աղու կամ աղաւնի անունէն առած չէ, կամ Չարմուիի անուան թարգմանութիւն մը չըլլայ (իբր յունարէն աղաւի, զարմանալի) . եւ այս թերես իր բնաշնորհ գեղեցկութեանն համար կամ անոյշ բարուցը, որովք անուանի էր . իրենց սիրոյն պտուղն այլ վկայէ որ ի շնորհս մօրն եւ յունական մերձաւորութեանն՝ կոչուեցաւ Աթենադորոս, որ նշանակէ Տուրք Աթենասայ, իմաստութեան դիցուհոյն, գեղեցիկ անուն, որ ոչ այնքան ծնողաց ընտիր ճաշակը կու ցուցնէ, որչափ ծածուկ շնորհաց ընտրութիւն մը . որ ի հեթանոսութենէ կանչելով գնա ի լոյս Քրիստոսի՝ ապա Աստուածատուր անուամբ կնքեց:

Գ

Պտղոց առատութեան ամսոց մէջ ընծայեցաւ Աթենոդոր յամին Քրիստոսի 269, կտրիճ հօր արիասիրտ որդի, եւ գեղեցիկ ու զարաղի մօր՝ գեղեցիկ եւ գողտրիկ գաւակ . աճելով առաւ այն հասակը եւ կերպարանքը՝ զոր տեսանք Սեղեմնուտի ձորակին մէջ քարին վրայ հանգչած երիտասարդին վրայ: Բայց տղայութեան հասակէն վեր անցնելու ատեն, երբ դալար մրտենոյ մը պէս շիտակ կու բարձրանար կարմրուկ ու գանգրուկ, եւ ոպնիագեայ սեւ աչքերն անթարգմանելի փայլունութեամբ մը կու վառէին, այն վտանգաւոր հասակին շատ հեղ նախանձոտ հիւանդութիւններէն մէկն եկաւ վրան . տասնուհինգ տարեկան էր, երբ աստեղանման գեղեցկութեանց մէջ՝ ցաւոց եւ վիրաց ամպեր ցրուեցան, եւ վե՛րք անբժշկելիք, որք որդւոյն մարմնէն աւելի ծնողաց սիրտը կեղեքէին,

թեպետեւ, երբ ցաւերուն ազդած հեղութիւնը բնատուր շնորհացը հետ խառնելով, Աթենոդոր՝ իր խարտեաշ գլուխը մօրը ծնգաց վրայ դրած, եւ ձեռուրներն հօրը ձեռաց մէջ՝ հանգչէր, կիսաբացիկ կիսամաղձիկ շողակաթ աչքերովն, տարակոյս կու բերէր՝ թէ այդ ցաւագին մրուրքն՝ իրեն աւելի՞ շնորհք բերած են թէ տարած, այնքան լուսաւոր կերպարանքն չէր խաւարած, այլ բարակ շուքերով խառնուած: Թէ եւ նոյն իսկ ցաւերն զինքն աւելի սիրելի ըրին ծնողացն եւ ծնողքը իրեն, սակայն կրնա՞ր հայր մը՝ իր պայագատը, իր ծերութեան յոյսն եւ յաջորդը, եւ մայր մը՝ իր սիրելագոյն ծնունդը՝ այդ տարակուսի մէջ տեսնել, եւ սիրոյն սաստկութեանը կսկիծն այլ աւելի սաստիկ չըզգա՞լ:

Սուրենի զբօսանաց եւ Ադուիթայ զարդարանաց ծախքն՝ մեծաւ մասամբ բժշկաց եւ բժշկական դարմանոց տրուեցան . ինչ որ հարուստ նախարար մը եւ որդեգորով ծնողք կրնային ընել՝ եղան . բայց զաւակնին չիբժշկեցաւ . շննաց աստուած՝ որոյ ուխտ եւ նուէրք եւ զոհ չմատուցին, բայց Աթենոդոր չըռնդցաւ: Եօթն տարի, կենաց առուզագոյն տարիներն, հասակին աճման եւ ձեւացման տարիներն, հիւանդութեամբ եւ ցաւերով անցան, եւ ցաւերուն անցնելու յոյսն ալ գրեթէ մէկտեղ անցաւ: Եւ երբ առողջութենէ յուսահատած՝ երկար ողջութեան մտածմունքն առաջ կու գար, երբ կենաց փափուկ թելն՝ ոլորուած մոլորուած երեւար ծնողաց աչքին, եւ անգութ կտրողին մկրատն կու մօտենար մօր մը դիմաց, եւ երբ դալարագեղ հասակն միջակոտոր ծառի մը պէս՝ գետին տարածուած տեսնուէր կասկածոտ մտաց . ո՛հ, այո՛՛ ամեն ցաւէ ցաւալի էր: ... Բայց լռենք, գուցէ զուր տեղ հին եւ նոր սրտեր ճմլին: ... Այսպիսի ցաւոց միայն մէկ զօրաւոր բժիշկ եւ դեղ մը կայ . կ'ուզե՞ս, ո՛վ կարօտեալ . չորս մատ աշուրներդ վեր վերցու, կ'իմանաս, կու տեսնես: ... Բայց ի՞նչ ընեն անոնք՝ որ զուրկ են մեր սուրբ կրօնից շնորհքէն: Դեռ կէս երանի անոնց այլ՝ որ գոնէ բնական լուսով կրօնասէր են եւ բարեսէր . եւ ազնիւ սրտի եւ մտածող գլխի տէր ըլլալով՝ իրենց կեանքը մարդկօրէն կ'անցընեն, եւ բարերարութեամբ կու ստանան կամ կու վայելեն այն բարիքը՝ զոր բնութիւնն իրենց չէ տուած կամ յետ է առեր:

Այնպիսի մէկ մէր եւ Ադուիթա, թէ եւ դեռ քրիստոնէութեան շնորհքէն զուրկ, այլ ոչ հեռի: Իր երկիրներուն մէջ լիճ մը կար Սիկիբիդոն ըսուած (որ յունարէն լսուելով՝ գուցէ Թզենուտ կամ Թզագարակ նշանակէր հայերէն), զոր հիմա չենք

տեսներ աշխարհացուցի վրայ, բայց պետք էր բառական ընդարձակ ըլլալ՝ որ Աղուիթա անոր եզերքը աւան մը կամ գեղ մը շիներ, իրեն գբօսանաց տուն եւ ագարակներ ու պարտէզներ, եւ շատ հեղ հոն քաշուելով իր գառնուկ պատանեկին հետ բնութեան գեղեցիկ տեսարաններով՝ իր եւ անոր ցաւերը մեղմէր . եւ ո՞ գիտէ քանի՞ երկայն ժամեր՝ վայրկեաններու պէս կ'անցնէին այն ծիածաժան ծովակին եզերքը, երբ Աթենոդոր դալար վարդաթրփի պէս գլուխը մօրը կոթրնցուցած, եւ նա իր վարսաւոր ճակատը՝ բարակ ճիւղ ուռննոյ պէս որդւոյն վրայ կախած, մէկ մը ջրերուն հանդարտութեանը վրայ, մէկ մը գառակին անմեղ խաղաղութեանը կու նայէր, եւ սրտին բորբոքած կրակներն՝ այն երկու պայծառ զովութեանց մէջ կու մարէր: Լճին մէկայլ կողմը՝ շինած գիւղին դիմաց՝ աղբիւր մը կար, պատշաճ եւ անոյշ անուամբ Արթէնուտ, որ աւելի անոյշ խոխոջալով կ'իջներ կու գար՝ թերեւս խառնուելու նոյն ծովակին ծոցը, ինչպէս Աթենոդոր իր մօրը գիրկը, անտարակոյս շատ հեղ Աղուիթա այդ աղբեր վաղուկ արծաթները իր ոսկեհատիկ որդւոյն ցաւած մասանց վրայ դարձուցեր, լուացեր ջնջեր էր . Աթենոդոր անոր քով հաւաքեր դրեր էր մարերեայ գունագոյն բոյսերը, յառաջ քան փունջ փունջ ընծայելու իր մօրը, որ միշտ մայրաբար՝ թէ իրեն եւ թէ իր որդւոյն մաս եւ պսակ կու հանէր այն մարգարտակաթ ծաղկըներէն: Որդւոյն ցաւոց վրայ գորովելով՝ կու յիշէր անոր պէս ցաւագարներ . մանաւանդ երբ կու տեսնէր գոմանս անոնցմէ, որք ըստ բարբարոս օրինաց հեթանոսութեան, հալածուելով ի շինից եւ ի բնակութեանց, անայի անբնակ տեղուանք կու թափառէին, իբրեւ նզովեալք եւ անիծեալք, այս սովորութիւնս կար նաեւ մեր ազգին մէջ այլ, զօր յետոյ շատ խնամքով ջանացին ջնջել Ս . Լուսաւորիչն եւ իր համանման սուրբ թոռն Մեծն Ներսես, շէնքերէ հեռու տեղուանք հիւանդանոցներ եւ ուրկանոցներ (բորոտներու տեղ) շինելով, որք եւ այդպիսի բարերարութեան տեղեաց մէջ հնագոյններն կու սեպուին, բայց իրենցմէ առաջ այլ այս ազնուասիրտ տիկինս Աղուիթա Արթէնուտ աղբեր քով շինեց տառապելոց պատսպարան մը, ուր ժողովեցան 35 ցաւագարք, եւ գթասիրտ Աղուիթայի տուրքերովը կ'ապրէին, եւ կ'օրհնէին իրենց բարերարը:

Ասոնց մէջ էր եւ Դասիոս կամ Դասիկ ծերունին, որ, ինչպէս Աղուիթա անոնց մայր սեպուեցաւ, ինքն այլ հայր եղաւ թէ անոնց եւ թէ նոյն ինքն Աղուիթայ եւ Աթենոդորայ: Առաջ՝ անոնց մէջ իր պատկառելի կերպարանօքն եւ արծաթափայլ երկայն մօրուօքն՝ Տիր դից կամ Վահագնի քուրմ մը կարծուէր, որ

քաղցր շրթամբքն ատելի քան ոսկեթել քնարով՝ ամենուն սիրտը կակղցնելով, եթէ ցաւերնին չկրցաւ բժշկել, գոնէ բնութեան բարիքներէն ու վայելչութենէն սկսելով՝ այն ռամիկ ցաւագնելոց միտքը բարձրացուց ինչուան առ բնութեան տէրն . եւ երբ հասուց յարմար վիճակի, հանեց յայտնեց իր ծածակած հովուական սրինգը եւ նոր նուագ մը երգեց, զամենքը ավիշեցուց, զամենքը գմայլեցուց, զամենքը հետեցուց իրեն . այս նոր նուագս՝ Նագովրեցի հովուապետէն սովրած էր, անոր վարդապետութիւնն էր, Քրիստոսի ատետարանն էր: Ծերունին Դասիկ գաղտուկ քահանայ էր, իր ընկերաց հովիւ եղաւ, մարմնոց ցաւերը թեթեւցրնելով՝ հոգիներուն մեռելութիւնն անգամ ողջնցուց, դարձուց զամենքն ի քրիստոնէութիւն . եւ ցաւոց ու փշոց մէջ հոգեգուարճ վարդանոց մը, դրախտ մը բացաւ, ուր՝ այն աշխարհքէ մոռցուած եւ մերժուած տատապեալքն ատելի երջանիկ ու սրտաբաց էին, քան իրենց երկար գերութիւնը թօթոող ու Տրդատայ յաղթական դարձով փառաւորեալ դիցապաշտ Հայկագունք:

Աղուիթա եւ Աթենոդոր այլ լսեցին Դասիոսի եւ Յիսուսի ձայները, եւ սրտերնին թնդաց, եւ թէ ոչ աւագանին ջրով՝ գոնէ սիրով ներսէն մկրտուեցան, եւ սիրով կ'երթային ծածկաբար սուրբ ծերոյն ատետարանութիւնը լսելու, որ յունարէն կու կարդար սուրբ գրքերը եւ կու բացատրէր շհասկացողաց: Մինչդեռ հոն, իբրեւ արեւական սեղանէ մը՝ սուրբ կրօնից նուէրքն, աղօթք եւ գոհն՝ հեզօրէն կու բարձրանար առ Աստուած, դիմացը աւանին քով հեթանոսաց մեհեանները կանգնուած՝ կու հրաւիրէին զառողջ եւ զհիւանդ ի գոհ եւ ի պաշտօն Հերակլի (Վահագնի) եւ Ասկլեպեայ՝ առողջութեան շաստուածոյն՝ որոց տօնքն մասնաւոր հանդիսի կատարէին հօն տարուէ տարի: Բարեմիտ կամ թերամիտ քուրմք եւ ժողովուրդք մեծ ջանքով կու յորդորէին զԱթենոդոր այլ՝ որ գայ այն մարդասէր աստուածներէն բժշկութիւն խնդրէ . բայց նա միշտ պատրուակներով կու զգուշանար . ինչուան որ հայրն այլ տեսնելով որդւոյն շափահաս տարիքը, որ քսանը անցուցեր էր, կու խրատէր որ անհոգութիւն չընէ . «այս վեց տարի է կ'ըսէր, որ մեր աստուծոց գոհ չես ըրած, թերեւս անոր համար այլ ցաւերդ կ'երկրնան» . իսկ Աթենոդոր՝ նոյն իսկ ցաւերը պատճառ կու բերէր գոհի շերթալուն . եւ ոչ միայն վեց՝ այլ եւ կրկին վեց տարի խաբեց հայրը, եւ ճարտարութեամբ ազատեցաւ: Հաւանական այլ է, որ Սուրէն իբրեւ գաւառապետ մը եւ թագաարմ, երբ լսեց Տրդատայ գալն ի Հռովմայեցոց, փութացաւ դիմացը ելլելու, եւ արքունի բանակին մէջ էր, որ՝ (իր երկիրն՝

Մալահունեաց մօտ» Եկեղեցաց գաւառին մէջ Գայլ գետոյն եզերքը դադրէր էր:

Դ

Քանի մը տարի այսպէս անցնելէն ետեւ՝ որ մը Սուրենաշէն աւանն թնդաց գինուց շշուկով . թագաւորական գունդ մը զորաց երեւեցաւ, որոց առաջնորդէր իշխանն Մագենտ . ասոնք Եկեղեցաց Երէզ աւանէն գալով եւ դէպ յԱրտաշատ երթալով ի հին մայրաքաղաքն Հայոց, կ'անցնէին Մալահունեաց գաւառէն, որ ճամբուն վրայ էր, ոչ պատերազմի եւ ոչ պաշտպանութեան համար էր երթալնին, հապա յանցաւոր մը, կապուած մը, թագաւորին անհնագանդ մը կու տանէին, տէրութեան դէմ պարտական գտուած մահապարտաց ամենէն սաստիկ բանտը ձգելու, որ էր Արտաշատ քաղաքին գետնափոր վիրապը, իսկ յանցաւորն այն՝ էր Գրիգոր մը...: Ի հարկէ ամեն դիէ հետաքրքիրք կու վագէին տեղեկանալու թէ ո՞վ է, ինչու՞ համար է, եւ երբ լսէին թէ Քաջի արանց Տրդատ թագաւորի հօրը՝ Խոսրովայ սպանողին որդին է, ի՞նչպէս ակռանին կրճըտելով կ'ուզէին վիրապը չհասած՝ հոն սպաննել ոչնչացնել զայն՝ որ քանի մը տարիէ վերջը պիտի ըլլար իրենց խաւարեալ հոգոց Լուսաւորիչ: Հարկ էր զօրականաց եւ կալանաւորաց հեռացընել վրէժխնդիր ամբոխը, եւ ապահով տեղէ մը անցընել կապեալը, անշուշտ աւելի ապահով ճամբայ այլ չկայր՝ քան մեր ցաւագնելոց պատսպարանին սահմաններն, ուսկից՝ զգուելով կու հեռանային այն ատեն առողջութեամբ, քաջութեամբ եւ ազատութեամբ պարծեցող ժողովուրդն Հայոց, իսկ հիւանդքն, տկարքն եւ նեղեալքն՝ համարձակութիւն գտնելով՝ իբրեւ անկար եւ կարօտ մարդիկ՝ պահապանաց կասկած չէին բերեր: Այսպէս կրցաւ Դասիկ իր ընկերներովն եւ Աթենդորոսի հետ՝ մօտենալ առ սուրբն Լուսաւորիչ, զորոյ խոստովանողութիւնը արդէն լսած ըլլալով, եւ անշուշտ աստուածային ազդեցութեամբ իմանալով թէ ի՞նչ անձն է եւ ի՞նչ պիտի ըլլայ այն կապուածն, բերաւ իբրեւ հովիւ հլու իր ցաւագար ոչխարները՝ ապագայ հովուապետին ոտքը ձգեց, եւ այն սրբագան նահատակին առաջին հրաշքը եւ շնորհքը վայելեցին այս նեղեալքս, որք եւ առանց նեղութեան եւ ցաւոց՝ Աստուծոյ փառք տալով դարձան: Հոն՝ Դասիկ ծածկաբար իմացուց Գրիգորի թէ ո՞վ է հետն եղած իշխանորդին՝ եւ գաղտ հաւատացեալ ու դեռ անկնունք ըլլալը: Սուրբն Գրիգոր քաջալերեց գծեր քահանայն, եւ պատուիրեց որ առանց վախի առնու տանի պատանին իրենց դիմացը՝ արեւելեան կողմը եղած աղբիւրը, (արդեօք Արբենուան, թէ ուրի՞շ մը) եւ

հոն մկրտելով զԱթենոդոր՝ անուանէ Թէոդոր, Աթենասայ տուրքն ընէ Աստուածատուր: Այնպէս այլ եղաւ, Լուսատրչի ծածկեալ լոյսն, զոր հաւատացելոց աչքն միայն կու տեսնէին, եւ մկրտութեան ջուրքն՝ նորէն ծնան այն կայտառ պատանին, եւ մարմնոյ ու հոգոյ աղտ ու բիծ՝ զամենն այլ ջնջեցին . դէմքն աւելի քան զմանկութեանն պայծառացաւ . հոգին եւս աւելի . եւ ոչ միայն գեղեցիկ, վայելուչ, կտրիճ, այլ եւ շնորհագարդ եւ սուրբ, մաքուր, պաշտելի անձ մը եղաւ Թէոդոր:

Երանաշնորհ մայրն այլ այս աստուածային պարգեւաց հաղորդ ըլլալով, երկուքն այլ չէին բաժնուեր Դասկայ քովէն . Արքենուտի ձորակը քրիստոնէութեան ծառածածուկ տաճար մը դարձուցին: Հայոց հեթանոսութեան վերջի տարիներուն եւ վերջի ջանքերուն ատեն, երբ Տրդատ դրդեալ ի Դիոկղետիանուէ հրաման հանէր եւ հալածէր զքրիստոնէայս՝ իր նոր տիրած եւ ընդարձակուած սահմաններուն մէջ, իր հաւատարիմ եւ անահտապաշտ իշխանքն այլ նոյն հոգով իրենց երկիրներուն մէջ հսկէին: Բայց Սուրէն որչափ այլ դիւանով եւ վրէժխնդիր էր, չկրցաւ իմանալ որդւոյն քրիստոնէութիւնը, շլսեց անոր անոյշ սաղմոսերգութիւնը Արքենուտի խոխոջանաց եւ Թգենուտի ծփանաց հետ: Ինչուան յետ վեց տարիներու՝ ուրիշներն կասկածելով եւ հասկընալով՝ մատնեցին որդի մը՝ իր հօրը, անմեղութիւն մը՝ անգթութեան: Իբր անախորժ քնէ մը արթըննալով Սուրէն, այն ատեն իմացաւ թէ ինչու՞ Աթենոդոր չէր երթար Վահագնի եւ Ասկլեպեայ սեղանները զոհիք եւ պսակօք պատուելու . թէ ինչու՞ այնպէս միայնութիւն եւ առանձնութիւն կու սիրէր որդին՝ նաեւ յետ բժշկութեանն, իբրեւ տղայութեան եւ հիւանդութեան յիշատակաց սովորութիւն մը: Ինչ որ ծուռ հաւատքի մը եռանդն, հայրենի գութ եւ տիրական կամք մը կրնային ընել տալ՝ ըրաւ Սուրէն . վեց ամիս աշխատեցաւ որդւոյն սիրտը դարձընելու, իր չափէն վեր այլ խոստմունքներ ընելով, եւ բոլոր Սալիսունեաց գաւառին ընդաձակ տէրութիւնը եւ փառքը ցուցընելով եռանդուն երիտասարդին . այլ ամենեւին չկրցաւ ազդել քրիստոնէայ սրտին: Հայրութիւնն դարձաւ ի տէրութիւն, տէրութիւնն ի բռնութիւն, եղաւ հալածիչ եւ դահլիճ որդւոյն . կարելի խոստմանցն հակառակ՝ ամեն կարելի սպառնալիք այլ ըրաւ, եւ հասուց պատիժ ու զրկմունք . ակամայ քան կամաւոր անգթութեամբ տանջեց իր աղիքը, սակայն չկրցաւ զատել զորդին իր նոր եւ յաւիտենական հօրէն, ն Բրիստոսէ: Յետ վեց ամսոց յօգնեցաւ, յուսահատեցաւ թշուառ եւ ողբալի հայրն, մէկ հատիկ եւ վերջին հնար՝ կամ

սպրեցրնելու կամ կորուսանելու՝ սեպեց իր սեւ սուրը . սպառնացաւ ու վճռեց սուկալի մահ: Թւոդոր բնաւ չվախցաւ մահուանէ, որ իրեն փափագելի հանգիստ մ'էր: Բայց նոր Սանատրուկ մը տեսնել, նոր Կայէն մը, իր հօրը ձեռօքը սպաննուիլ, ո՛հ, այս դառն էր քան գմաճ էր մահերու մահ: ... Աղա՛ղ Աղուիթայ, ոչ իր կողակից կենակից ամուսնական իրաւունքն, ոչ կնոջական մայրական խանդաղատանքն էր գուրն՝ չկրցան ազատել իր մէկ հաստիկը: Գագանացեր էր Սուրէն, աշուրներն արիւն, բերանն մահ կու փոխէր, ոչ որ կրնար մօտենալ անոր . սպառնալեաց ժամանակն այլ անցեր էր, ըլլալիքն հասեր էր:

Թւոդոր վերջին անգամ մը նայելով իր կրկին էր մէկմէկէ շատ աննման ծնողաց վրայ, բոլոր որդիական էր քրիստոնեական երկու կրակներով վառած արեւանման աչքերովն, աննկուն գօրավարի պէս, որ յետ ամենայն գօրականաց՝ քաշ քաշ կ'ինկնայ գորատրագոյն թշնամոյն առջեւ, արցունքները զսպելով, էր թողլով այն շէնքը՝ որ երբեմն իրեն ծննդեան՝ տեղ, էր ասկէ ետեւ իրեն համար ամայութիւն էր ունայնութիւն էր՝ բոլոր աշխարհիս հետ, թերեւս մօրը դիմաց սարսափելի էր անտանելի տեսարան մը չբանալու համար, էլաւ գնաց անդարձ նետի մը պէս: Ծովակ, ձորակ, աղբիւրք էր հիւանդանոց չկրցան արգելուլ զինքը, ամենուն վերջի նայուածք վերջի բարեւ տալով, էր ո՛վ գիտէ ինչպէս սրտին չափագանց ծանրութիւնը էր լեցունութիւնը թափելով Դասկայ գրկաց մէջ, էր ընդունելով անկէ անմահութեան ճաշակը էր կենաց հացը, երիտասարդական ուժով մ'այլ ցնցելով զինքն էր թափելով սուրբ ծերոյն դողդոջուն թելերէն էր արտասուաթոր մօրուքէն, փախաւ գնաց Արբենուտի ձորէն դուրս, էր անցաւ մօտիկ էր աւելի անձանօթ անձայն ձորակի մը մէջ, որ կ'ըսուէր Սեղեմնուտ . էր հոն եօթն օր վեր վար պտըտուելով, Յեփթայեայ օրիորդին նման, Արդլմսեհի նման, ինքզինքը հրաժարեցրնելով իր ծաղկեալ կեանքէն, իր պայծառ արեւէն, անգին մօր մը սրտակտուր ծոցէն, կու նուիրէր միայն անոր՝ ուսկից կու գան էր ուր կու դառնան ամենայն բարիք էր ամենայն բարիք էր ամենայն շունչք արդարոց . մինչեւ յօգնած էր հանդարտած՝ ընկաւ փռուեցաւ այն ծառին տակ է այն քարին վրայ, ուր տեսանք զինքը առաջին անգամ մեր պատմութեան սկիզբը: ...

Ե

Հիմա գիտես, Հայկակ, ուր ըլլալդ, կու ճանչես ով է այդ չքնաղ երիտասարդդ, կեցի՛ր հոս պահ մ'այլ, վերջին պահ . վասն զի այլ երկայն ժամանակ չկայ . մօտեցիր այդ անտաշ ապառաժ սեղանին քով, այդ Սեղեմնուտի սաբեկայ ծառին տակ, ես լռեմ, դու գիտէ եւ գգա: ...

Բայց ահա հեռուան վիշապի խոշիւն մը կու լսուի, առիծու մոնչիւն մը, ձորեզերէն վար վարագաթեւ սեւ արծուի պէս կու սլանայ կ'իջնայ ծառին վրայ, ծառին ներքեւ քարին մոտ... երկայնժամիք հրէշ մ'է, գաղտնագոյն քան գվիշապ, քան գառիծ, քան գարծուի... Ինքն է, ինքն է, սուսերամերկն Սուրէն... որդոյն փախստեան վրայ աւելի կատղած եւ արեան վրիժով լցուած, հին պատենէն քաշելով ժանգոտ սուրբ, եւ «Ա՛յդպէս, իմ երիտասարդութեանս երկա՛թ, այնքան կոտրած թշնամեացդ արեանք չկշտացած՝ ծերութեանս ատեն ինձմէ իմ որդոյս արի՛ւնն այլ պիտի ուզէիր թափելու», ըսելով, կ'առնու, եւ մոլեգին դիւահարի պէս կ'ընկնի սարէ սար ձորէ ձոր որդին փնտռելու: ... Անշուշտ սատանայական ոգին զինքը քաշէր քշէր տանէր, ինչպէս երբեմն գԿայէն ի մահ Աբելի, կամ ինչպէս անկէ առաջ (ըստ դրախտերգակ քերդողին) ինքնին՝ դժոխսց անդունդներէն ելած՝ կու փնտռէր դրախտին դուռը, որ մեր երանեալ նախածնողքը ձգէ ի մեղս եւ ի մահ: Այսպէս դիւական թափառանօք վերջապէս հասաւ Սեղեմնուտի ձորեզրը, եւ իբրեւ սեւ արծուի՝ տեսնելով բարձրէն ծառին տակ իր փնտռած որսը, հասաւ շուտ ու թեթեւ անոր վրայ: ... Բայց ի հարկէ երկու քայլ մնացած՝ բնաբերաբար կամ ակամայ կամօք՝ կանգ առաւ . հայրենի բնութիւնն զօրանալով՝ դիւական մոլութեան մէջ անգամ հիացա՛ւ այն սքանչելի հանդարտութեան եւ անմեղութեան թափանցիկ քունին վրայ, որուն նման բան չէր տեսած երբէք...

Ո՛հ, եւ ինչու՞ չիձգեց սուրբ ձեռքէն, ինչու՞ չցատքեց ընկնալու, եւ հայրական շրթունքները վեր վար բերելու այն մարգարտաշար վարդերուն վրայ, այն բարակ քրտնահար երեսներուն վրայ, այլ առանց դպչելու կեցաւ կանչեց կերկերեալ կոկորդով մը՝ Աթենդոն՝ր, որդեակ»: ... Թւողոր հեզամրափ աշուրները կէս մը բանալով եւ կէս մը գլուխը վերցրնելով՝ պատասխանեց . «Հա՛յր իմ»... վերջի՛ն անգամ հօր եւ որդոյ անուանակոչութիւնք: Սուրէն դարձեալ այլայլած՝ հարցուց անոր, թէ պիտի հաւանի՞ իր կամացը եւ թողով գՔրիստոս դառնա՞յ ի պաշտօն կոոց: Թւողոր՝ «Ես Քրիստոսի հաւատացեալ եմ, ըսաւ, եւ այս հաւատոյս վրայ

հոս կու մնամ» . Եւ նորէն դրաւ գլուխն ի քարին, խփեց շրթունքը եւ աչքերը ...
մնա՛ք բարով արեւ, կենաք եւ աշխարհ: Բայց մէկ անգամ մ'այլ բացաւ Թւոդոր
կիսակէս աչքը եւ շրթունքը, երբ Սուրեն վայրենի վագեր պէս մէկ ցատքելով ձգեց
ձախ ձեռքը, եւ որդւոյն երկու թիզ խարտեաշ մագերէն բռնելով վեր քաշեց
խնձորակերպ գլուխը, եւ պարկեշտ պատմութեանին օձիքէն կարապաճեւ
պարանոցն երկրնցաւ:...

Ո՛վ հրեշտակային կերպարանք, ի՛նչպէս կ'այլափոխիս: Իսկ Սուրենայ աջ
ձեռքէն յանկարծ փայլակ մ'էր շողաց շեշտակի: ...

Հոս միատեղ մէկդի կ'ընկնան՝ պատմչին գրիչն, Սուրենի սոսկալի սուրն, եւ
Թւոդորի ճերմակ վզէն նոնանման ճեղքուած կարմրահատ գլուխն:

Ձ

Ու՞ր են հիմա մեր մայիսի ծնած ծաղկունքն, ու՞ր մնացին մրագարդ մարերեայ
մրգունքն: Այսպէս, չկայ ծաղիկ հողածին՝ որ չցամքի, չկայ պտուղ երկրաբոյս՝
որ չթոթափի, ամենայն դալար ու պայծառ, յետ քիչ ժամանակի պիտի ըլլայ
մռայլ ու խաւար: Սակայն ծաղիկ այն ծաղիկն է, որ երբ ճղէն այլ գատուի՝
դարձեալ մնայ անթառամ, եւ մանաւանդ նոր գեղեցկութեամբ մը յաղթէ կանգուն
ու ճոճուն ծաղկանց: Այսպիսի ծաղիկ է հայրագեն դառնանման կոտորեալ
երիտասարդն Թւոդոր, թաւալեալ իր հովանաւոր ծառին եւ իր հանգստեան քարէ
բարձին տակ՝ օշօշով եւ մանուշով հիստուած խոտերու վրայ, Սեղեմնուտի օդաւոր
ձորակին մէջ . ուր հեզամնչիկ հովիկն խոնարհած կու խաղայ անոր արիւնլուայ
վարդէ գիսակաց հետ . ինչուան որ երեկոյեան գովութիւնն դադրեցրնէ եւ
պաղեցրնէ կարմիր կաթիլները, եւ գիշերուան լուսագնտիկն վերէն ծաթէ
արծաթափայլ դողդոջուն ճառագայթները, որք կու մարմրին, շուք մը կու
դառնան՝ Թւոդորի մարմնէն ծագած հրաշափայլ լուսոյն քով: Այս լոյսն անշուշտ
առաջնորդեց այն մարմինը մեծցրնող եւ գգուող եւ հիմա զինքը սրտաթունդ
փնտռող անձի մը, սօր մը: ... Չտեսնենք, չքննենք մենք այն մայրը Սեղեմնուտի
մէջ: Դու այլ դարձի՛ր մայրիկ, դարձի՛ր Աղուիթա՛ առ Դասիոս, եւ հրաման
տուր . «Ե՛լ, հայրիկ, ել գնա ի Սեղեմնուտ, հոն կու գտնես իմ հայրագեն
գառնուկս, իմ մրրկաթափ վարդենիս, իմ նուաղած աղիքս, առ ու լուս այն

արշալոյս ճակատը, բայց կիսալուայ ըրած՝ բե՛ր ինձի փունջ մը ոսկեթել
մագերէն, որ գլուխս վերջին պսակ ընեմ . լեցուր այն շուշանացեալ շրթունքները
մայրենի եւ հայրենի համբոյրներով . ապա մաքուր կտաններով գոցէ՛, գոցէ այն
արեւակերպ դէմքը, գոր քիչ ատենէն պիտի տեսնեմ յերկինս . եւ գիր ծածկէ ի
ծոց ամենուս ծնողին, հողուն»:

Գնաց գետնամած ծերունին, հետն առած Թւողորի հին ընկերները եւ ուրիշ
ծածուկ քրիստոնէաներ, հաւատացեալ եղբարք եւ քորք, պարկեշտ կուսանք, որ
քողով եւ մագով արցունքնին ծածկած, եւ բոցաշարժ ճրագներ բռնած
յողարկաւոր կ'երթային Թւողորի: Արդեօք կայի՞ն անոնց մէջ, կամ կա՞յր մէկ մը՝
որ յուսացեր էր երկրիս վրայ այլ սրտակից ըլլալու սուրբ նահատակին, եւ յետ
անոր մօրը կանչելու գնա՛ ինս Թւողոր . պատմութիւնն կու լռէ: ...

Քահանայական եւ մարտիրոսական պաշտօն, աղօթք եւ արտասուք
կատարուեցան . այն հովանաւոր ծառին ներքեւ եւ այն սեղանացեալ քարին քով՝
փորուեցաւ եռանդուն երիտասարդին քնարանն, եւ ծածկեցաւ մարտիրոսի
մարմինն: Անարուեստ պարզունակ քարկոփ խաչ մը վկայ կեցաւ
նահատակութեան եւ հանգստեան սրբոյն Թւողորի: Թող գայ հիմա Աղուիթա
աղօթելու երանեալ եւ աստուածագգեաց որդւոյ մը մնացորդաց վրայ: Ահաւասիկ
երանելի տիկինն, ծառէն աւելի մագերը ցրուած՝ փռուած ճակատ ի գետին:
Իբրեւ կրկին մարք սաղմոսեան դատարանին, հողն ու Աղուիթա կու գրկեն ու ինս
է կ'ըսեն այս որդեակս: ... Քիչ մ'այլ սպասէ Աղուիթա, եւ ահա թագաւորն
խաղաղութեան՝ իր ցանկալի վճիռը կու տայ, եւ յաւիտեան քուկդ կ'ըլլայ քու
Թւողորդ:

Է

Իսկ հա՞յրն քա՛ւ լիցի, ամենեւին անարժան այնպիսի անուան .
գագանացեալն, դիւամոլն կամ դիւրախառն Սուրէն, իր սատանայական սուրը
առած՝ եւ եկածէն աւելի շուտով փախչելով կու հեռանայ . տեղերն կու փախչին
եւ ինքն իրմէ չի կըրնար հեռանալ . Գոչումն արեան որդւոյն բողոքէ յերկրէ եւ
յերկնից: Հեզիկ գառին արիւնն հիմա երկնաւոր նահատակի ահաւոր մասունք
դարձած՝ սուրին վրայէն Սուրենի սիրտը կու պատառէ . կու փութայ խելացնորն

մօտի աղբիւրը, աղէկ մը կու լուայ կու ջնջէ որդւոյն յետին նշանները, եւ անով իր եւ անոր միջի կապն՝ յաւիտեա՛ն կու ջնջուի: Չորս տարի այն դառնագոյն դահճին, խղճի խայթուածքներուն մատնուած, Սուրէն կեանք մը կամ կենաց պատկեր մը անցընելով, անգեղջ եւ անյոյս կոապաշտ մոլորութեամբ մեռաւ, եւ յիշատակն յանէծս եւ ի սոսկումն մնաց: ... Իւրածին որդւոյն արեան խուլ եղող սիրտն՝ չեղաւ արժանի Աստուծոյ Որդւոյն ձայնը լսելու՝ Լուսատրչի բերնէն, եւ դառնալու ի հաւատս Թեոդորի՝ համօրէն Հայաստանեայց հետ, որք յետ երկու տարւոյ արժանացան այս ամենամեծ պարգեւիս: Վասն զի Ս . Թեոդոր նահատակեցաւ յամին 296, այսօրուան ամսակէտիս (11 մայիսի) 28 տարեկան եւ 6 ամսեկան . Սուրէն կորաւ 300ին . Ս . Գրիգոր լուսատրիչ՝ ելաւ ի վիրապէն յաջորդ տարին (301) . եւ երբ հետեւեալ տարին կ'երթայ ի Կեսարիա՝ Հայոց եպիսկոպոսապետ ձեռնադրուելու, անցաւ սովորական ճամբէն, Սալիումեաց գաւառէն եւ աւանէն, ո՛րչափ տարբեր 15 տարի առաջ անցածէն . փոխանակ շղթայից եւ կալանաւոր պահապանաց, հիմա Տրդատայ յաղթական կառաց վրայ դրուած եւ Հայոց ամենէն մեծ նախարարներն չորս դին առած: Այլ հեզն եւ ազնուասիրտ հայրն մեր՝ փառաց վրայ աչք չունենալով, իր սուրբ սանուկը կու փնտռէր . կանչեց գտաւ ծերունի քահանայն եւ հարցուց զԹեոդոր . Դասիկ իր ընտրեալ հովուապետին ձեռքէն բռնելով տարաւ ցրցուց այն տեղը՝ ուր որ վեց տարիէ ի վեր կու քնանար անոր հրամանաւ կնքուածն: Ի՛նչ կենդանակայլակ արտասուքներ էին որ Լուսատրչի մը աչքերէ իջան հայրաքար սուրբ երիտասարդին նշխարաց վրայ, որ իր քրտանց առաջին պտուղն, եւ մեր լուսաշնորհութեան անդրանիկ խայրիքն էր . անոր համար եւ առաջին վկայարան՝ յետ Հռիփսիմեանց նշխարաց ամփոփման, Թեոդորի հանգստարանն եղաւ . ինքնին Գրիգոր դեռ չձեռնադրուած՝ կանգնեց հոն մատուոտ մը, եւ երբեմն երախայ յանձնածը՝ հիմայ սուրբ վկայ մը յանձնելով Դասիոսի՝ գնաց: Եւ երբ ցանկալի տաճարիկն իր ճակատը բարձրացուց դէպ յարեւելք, աջակողմեան անկիւնը հանգչեցուցին սրբոյն մաքուր նշխարքը . մէկայլ անկիւնն այլ՝ տապանաքարին դիմաց՝ դրին այն սրբեալ քարը՝ որ մեր գառին զենման սեղան եղաւ: Այն երկու սխրալի սրբատաշ քարանց մէջ էր անկէ ետեւ՝ Աղուիթայ սիրելագոյն հանգստարանն, որ իր որդւոյն մատրան սպասաւոր ըլլալով՝ իբրեւ հաւատաւոր այրի մը, երկնախառն կեանք մը անցուց հոն, այլ ոչ երկայն ժամանակ: Որդւոյն նահատակութենէն եօթն տարի վերջը, երբ հասաւ տարեդարձ անոր վերջին անգամ իրեն համբոյր տալուն եւ տնէն փախչելուն, նոյն

օրը (5 մայիսի) Ադուիթա, որպէս թէ դարձեալ զգալով այն ցաւալի կիրքը եւ որդին փնտռելու ելլելով՝ աւանդեց աղաւնաշունչ հոգին, եւ ճգնասուն մարմինն թաղեցաւ իր որդեկին դիմաց՝ տաճարին դռնէն դուրս: Այդոր եւ առաջի յիշեալ երկու սրբանիշ քարանց նման չորրորդ մ'այլ գրուեցաւ՝ Ադուիթայ տապանին դիմաց, տաճարին արեւմտեան կողմը, եւ ներքեւն հանգչեցաւ Գասիկ, որ այս սխրալի քան տխրալի հանդիսից մէջ առաջինն ըլլալով հասակաւ, վերջին եղաւ ժամանակաւ . եւ ամեն բան կարգելէն կնքելէն ետեւ, ըսաւ իր ալէկից Սիմէոնին հետ . «Արդ արձակեա, Տէր, զԾառայս քո՝ ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն» . եւ հանգեաւ ընդ արդարս: Թէոդորի թէ տապանէն եւ թէ այն աղբերէն ուր իր արեան կաթիլքն խառնեցան՝ սուրին լուսլէն, շատ հրաշքներ եղան հիւանդաց եւ մոլեգնելոց վրայ . եւ ոմանք եղան, ինչպէս կու ցուցընէ երախտապարտ պատմըշին բանակարգութիւնն, յառաջ իսկ քան զշինութիւն մատրանն եւ գդարձն Հայոց ի ձեռն Լուսաւորչին: Հայագիրն շիտիպեր զմեզ հոս մէկիկ մէկիկ յիշել զանոնք, վկայասիրաց թողումք հին պատմչին նշանածներէն ետքն այլ եղածները քննելու եւ իմացընելու մեզի իսկ, որ զայս իրենց կ'իմացընենք: Եւ եթէ հարցընէ սիրողն՝ Թէոդորի վկայարանը կամ ուխտատեղին, երթա՛ յԵրզնկա, եւ անցնի արեւելեան կողմը եւ հարցընէ Գորոփու Ս . Թորոս վանքը, զոր սրբազան նահատակէն 1140 տարի վերջն այլ յիշատակած գտնենք ի գիրս՝ «մեծափառ եւ բարձրապատի ուխտ» կոչմամբ: Հոն քննէ գտնէ եւ համբուրէ մեր ըղձաւոր շրթամբք այլ՝ այն չորս սրբանիշ քարերը, եւ մանաւանդ հիւսիսային անկեանը . հոն կանգնի եւ համբուրէ (եթէ պահուի ցարդ) ձողաբարձ խաչի մը մէջ գրուած սրբոյն Թէոդորի քաղցրաբարբառ յիսուսախօս լեզուն, որոյ համար այլագգիք անգամ, կ'ըստի թէ այն տեղը կ'անուանեն Սըրըզը Ս . Թորոս (եթէ Գորոփու կամ Սալահունի անունէն փախուած չէ այդ անունը): Յանձնենք իր հետ՝ աշխոյժ եւ ճարտարարուեստ հասարակակցաց Ս . Թէոդորոսի, դիտել նկարել եւ ցուցընել մեզի այս պատմութեանս մէջ յիշեալ տեղուանքը . երկու ձորակները, երկու աղբիւրները, ծովակը, աւանները, դղեակները եւ այլն . յանձնենք անոնց վատվոտն մտաց եւ կրթեալ սրտից եւ մատանց՝ նուագել եւ երգել այս պատմութեան եւ եկեղեցոյ արժանի եւ ընտիր դրուագն . աղաչենք մեր եկեղեցոյ գլխաւորաց, իրենց զանազան հոգոց մէկը պակսեցընելով կամ մէկ մ'այլ աւելցընելով՝ այսպիսի սխրալի սրբոյ մը յիշատակը չիձգել միայն Յայսմաւորաց թափթըփած թերթից մէջ, այլ բարձրաձայն հոչակել տալու սուրբ խորանաց վրայ, եթէ արդարեւ սրբոյն Գրիգորի Լուսաւորչի գործակից եւ

հոգեկից ըլլալն կու ճանաչեն իրենց առաջին հոգ եւ պարտք, եւ պաշտամամբք
սրբոց՝ բարձրացընել գփառս Աստուծոյ: